ՀՀ ՊՆ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱԹՈՅԱՆ ՎԱՐԴԱՆ ԿՈՐՅՈՒՆԻ

# ՀԱՆՐԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԸ. «ՈՒՂԵՂԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԸ» ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐՈՒՄ

**ԻԳ.00.02 – «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ, միջազգային հարաբերություններ» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների դոկտորի գիտական աստիճանի հայցման ատենախոսության**

## ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2018

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում

**Պաշտոնական ընդդիմախոսներ՝** քաղ.գիտ.դոկտոր Ս.Մ.Մինասյան

քաղ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Ա.Վ. Աթանեսյան

քաղ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Տ. Տ. Քոչարյան

**Առաջատար կազմակերպություն՝** ՀՀ Պետական կառավարման ակադեմիա

Ատենախոսության պաշտպանությունը տեղի կունենա 2018 թ. փետրվարի 16-ին, ժամը 15:00-ին, ՀՀ ՊՆ Պաշտպանական ազգային հետազոտական համալսարանում գործող ՀՀ ԲՈՀ-ի «Քաղաքագիտություն» 056 մասնագիտական խորհրդի նիստում:

Մասնագիտական խորհրդի հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037, Ուլնեցու փող. 56/6:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի գրադարանում: Սեղմագիրն առաքված է 2018 թ. հունվարի 15-ին:

056 մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,
հոգեբանական գիտությունների թեկնածու,
դոցենտ [illegible]որյան

**Հետազոտության արդիականությունը:** Արդի աշխարհում պետությունների սոցիալական, տնտեսական, քաղաքական, մշակութային միջավայրերում, ինչպես նաև գլոբալ և տարածաշրջանային մակարդակներում տեղի ունեցող հարափոփոխ գործընթացները, որոնք բնութագրվում են պերմանենտ անկայունությամբ, անորոշությամբ, բարդությամբ և ոչ միանշանակությամբ, միաժամանակ տեխնոլոգիական աննախադեպ զարգացման արդյունքում հասարակական կյանքում առաջ եկած վերափոխումները, ընթացող գլոբալացման և դեգլոբալացման, ինտեգրացման և ատոմիզացման գործընթացներն էական ազդեցություն են ունենում նաև հանրային քաղաքականության բնագավառի ու մասնավորապես հանրային քաղաքականության ոլորտում որոշումներ կայացնողների վարքագծի վրա: Հաճախ նման վերափոխումների անկանխատեսելիությունը և ազդեցության բազմաշերտ, բազմամակարդակ ու մեծամասշտաբ բնույթը նպաստում են գլոբալ անորոշությանը: Նման իրավիճակը նպաստում է պետությունների կենսագործունեության, կայուն զարգացման ապահովման և ազգային անվտանգության վրա ազդող գործոնների ու գործընթացների բազմաշերտացմանը, դրանց ապահովման գործիքակազմի վերանայմանը, կայացվող որոշումների ազդեցության շրջանակների ընդլայնմանը, ինչն անորոշության հետ միասին զգալիորեն բարդացնում է որոշումների կայացման գործընթացը՝ մեծացնելով կայացվող քաղաքական որոշումների «գինը» և էապես ընդգծելով չսխալվելու անհրաժեշտությունը: Բնականաբար այս իրավիճակն էապես փոփոխում է հանրային քաղաքականության բնագավառում որոշումների կայացման, քաղաքականության իրականացման ու որոշումների լեգիտիմացման ընթացակարգերն ու մեթոդաբանությունը: Փոփոխության են ենթարկվում նաև քաղաքական որոշումները պատրաստող, դրանց կատարման

ընթացքն ուղեկցող ու որոշումների հանրային լեգիտիմությունն ապահովող սուբյեկտների կազմը, կառուցվածքն ու ներգրավվածության աստիճանը: Ակնհայտ է, որ արդի աշխարհում յուրաքանչյուր առանձին երկրում տեղի ունեցող գործընթացները, երևույթները կամ փոփոխությունները երբեմն դադարում են լինել միայն այդ երկրի ներքին խնդիրը և զգալիորեն ազդում են ոչ միայն դրանց կամ տվյալ տարածաշրջանների,այլև ամբողջ աշխարհի վրա:

Հանրային քաղաքականության որոշումների բնագավառում հետզհետե մեծանում է քաղաքական որոշումների մշակման, ընդունման, դրանց իրագործման փորձագիտական ուղեկցման և լեգիտիմացման նոր հարացույցի մշակման ու որոշումների գործընթացում նոր սուբյեկտների ներգրավման անհրաժեշտությունը:Իսկ հանրային քաղաքականության բնագավառում նոր սուբյեկտների ներգրավման նպատակահարմարության, դրանց ներուժի և արդյունավետ կառուցակարգերի բացահայտմանն ուղղված ուսումնասիրություններն առանձնահատուկ նշանակություն են ստանում՝ պայմանավորելով դրանց հրատապությունն ու արդիականությունը:

Հատկանշական է,որ հանրային քաղաքականության որոշումների մշակման, փորձաքննության, դրանց ընթացքի գնահատման ու լեգիտիմացման գործընթացի կազմակերպմանն են միտված նաև տարբեր երկրների հանրային քաղաքականության բնագավառում ակտիվ դերակատարում ստանձնած այնպիսի սուբյեկտներ, ինչպիսիք են ուղեղային կենտրոնները: Վերջիններս բազմաթիվ երկրներում վեր են ածվել ոչ միայն պետության որոշումների փորձագիտական, տեղեկատվական ապահովման խնդրի լուծողների կամ հանրային քաղաքականության ընթացքի օբյեկտիվ փորձաքննություն իրականացնողների,այլև բուն որոշում պատրաստողների և պետության փափուկ ուժի կիրառման ու հանրային ընկալման մեջ կայացված որոշումների կամ կիրառված քաղաքականության լեգիտիմության ապահովման առանցքային գործիքների: Ընդ որում, վերջիններիս առանցքային նշանակությունն ընդհանրապես

պայմանավորված չէ պետության կառավարման մոդելով կամ ժողովրդավարության հասունության աստիճանով: Ուղեղային կենտրոնները մեծաթիվ են ու տարբեր ձևաչափերով ներգրավված հանրային քաղաքականության բնագավառում ինչպես կայուն ժողովրդավարական համակարգ ունեցող երկրներում (ԱՄՆ, Մեծ Բրիտանիա, Կանադա, Գերմանիա և այլն), այնպես էլ կոմունիստական հասարակարգ ունեցող Չինաստանում կամ կրոնապետական կառավարման համակարգ ունեցող երկրներում (օրինակ՝ Իրանում) և այլն: Ճիշտ է, պետության մոդելը որոշակի ազդեցություն ունի նաև ուղեղային կենտրոններ-քաղաքական վերնախավ, ուղեղային կենտրոններ-հասարակություն հարաբերությունների մակարդակի և ձևաչափերի վրա:

Ուշագրավ է, որ հանրային քաղաքականության որոշումներում ուղեղային կենտրոնների ներգրավումը (նաև ներգրավվածության աստիճանը), հասարակության վրա դրանց ազդեցության ուղիները պահանջում են համապատասխան քաղաքական մշակույթի և ոլորտի ինստիտուցիոնալ կայացման համար բարենպաստ միջավայրի առկայություն, որոշումներ կայացնողների անձնական նախաձեռնողականություն, ինչպես նաև ուղեղային կենտրոններ-հանրային քաղաքականության այլ սուբյեկտներ իրավահարաբերությունների և ուղեղային կենտրոններին որոշակի գործողությունների պատվիրակման հստակ կանոնակարգերի առկայություն, ինչն իրականում տարբեր երկրներում (անգամ միևնույն մոդել որդեգրած) տարբեր կերպ է տեղի ունենում: Ըստ էության, ուղեղային կենտրոնների միասնական տիպաբանության և իրականացրած գործառույթների ու հանրային քաղաքականության վրա դրանց կիրառած ներազդեցության միասնական գործիքակազմի բացակայությունը պահանջում է, որ պետական կառավարման համակարգ-ուղեղային կենտրոններ համագործակցության արդյունավետ ձևաչափերի մշակման ու որոշակի երկրում ոլորտի արդյունավետ զարգացման նպատակով համակարգային ուսումնասիրվեն տարբեր երկրների ուղեղային կենտրոնների փորձը, վեր հանվեն դրանց գործունեությանը նպաստող ու խոչընդոտող միջավայրային գործոնները, և

գնահատվեն միջազգային առաջավոր փորձի ներդրման հնարավորություններն ու խոչընդոտները՝ ելնելով տվյալ երկրի առանձնահատկություններից:

Հատկանշական է, որ Հայաստանի Հանրապետության սկզբնավորման առաջին իսկ օրվանից, մշտապես գտնվում է բարդագույն որոշումների կայացման գործընթացում: Սա պայմանավորված է ինչպես տարածաշրջանային իրողություններով ու դրանց նկատմամբ գլոբալ խաղացողների աշխարհաքաղաքական չմարող հետաքրքրություններով, այնպես էլ արցախյան հիմնախնդրով, երկրում իրականացվող ինստիտուցիոնալ վերափոխումներով, կայուն ժողովրդավարական ինստիտուտների կայացման, երկրի ազգային շահերի պաշտպանության, ինչպես նաև շարունակվող սոցիալ-տնտեսական բարդ իրադրությունը հաղթահարելու ուղիների ընտրության անհրաժեշտությամբ: Հայաստանը քաղաքական ինստիտուտների կայացման, ժողովրդավարության ամրապնդման,միջազգային հարաբերությունների բնագավառում իր հնարավոր գործընկերների բազմազանեցման, ներքին տնտեսական խնդիրների լուծման առումով շարունակելու է գտնվել բարդ որոշումների կայացման, կիրառման ու դրանց արդյունավետության գնահատման երկարատև գործընթացում, ինչի լավարկման և կայացվող որոշումների լեգիտիմացմամբ ցնցումների հավանականության բացառման նպատակով խիստ արդիական են դառնում հանրային քաղաքականության բնագավառում գաղափարների գեներացման, այլընտրանքային մոտեցումների, որոշումների վերլուծական-փորձագիտական ուղեկցման և հանրային կարծիքի ձևավորման փորձառություն ունեցող կազմակերպությունների ներգրավումը, դրանց ինստիտուցիոնալ զարգացմանը նպաստումն ու հանրային քաղաքականության բնագավառում կայացվող որոշումներում որոշում կայացնող-ուղեղային կենտրոններ արդյունավետ փոխգործակցության մշակույթի ձևավորումը: Ընդսմին, հանրային քաղաքականության որոշումներ կայացնողներ-ուղեղային կենտրոններ արդյունավետ փոխգործակցությունը բարդ որոշումների կայացման վերլուծական-փորձագիտական աջակց-

ման, դրանց ընթացքի գնահատման և հասարակական ընկալման մեջ ընդունված որոշումների լեգիտիմացման կարևոր նախապայման է:

Ատենախոսության **օբյեկտն է** հանրային քաղաքականության բնագավառում որոշումների ընդունման գործընթացը, կայացվող որոշումների աջակցմանը միտված ուղեղային կենտրոններն ու դրանց գործունեության ինստիտուցիոնալ միջավայրը, իսկ **առարկան՝** հանրային քաղաքականության բնագավառում ուղեղային կենտրոնների դերի ու նշանակության իմաստավորումն ու արժևորումը, ինչպես նաև որոշումների մշակման, կայացման, փորձագիտության ու լեգիտիմացման գործընթացներում ուղեղային կենտրոնների ներգրավման հիմնախնդիրներն ու դրանց լուծման ուղիները:

**Հետազոտության նպատակն ու խնդիրները**: Ատենախոսության **նպատակն է** բացահայտել հանրային քաղաքականության որոշումներում և հանրային կարծիքի ձևավորման բնագավառում ուղեղային կենտրոնների ներգրավման և ազդեցության ձևաչափերն ու առանձնահատկությունները, կարևորել որոշումների լավարկման ու լեգիտիմացման գործում ուղեղային կենտրոնների նշանակությունը, վեր հանել ՀՀ-ում քաղաքական որոշում կայացնող-ներ-ուղեղային կենտրոններ փոխգործակցության մշակույթի ձևավորման ու ուղեղային կենտրոնների ինստիտուցիոնալ կայացման վրա ազդող գործոնները:

Աշխատանքում առաջ են քաշվում հետևյալ **հետազոտական խնդիրները**.

- բացահայտել որոշումների կայացման գործընթացում ինտելեկտուալ արտադրանքի նշանակության ընկալման փոխակերպումների հիմնական օրինաչափությունները մինչ ուղեղային կենտրոնների ձևավորման, էվոլյուցիայի և ինստիտուցիոնալ կայացվածության ժամանակաշրջաններում:
- Բացահայտել կառավարման տարբեր մոդելներով երկրներում քաղաքական որոշումների գործընթացում ուղեղային կենտրոնների ներգրավման, կայացվող որոշումների և հանրային կարծիքի ձևավորման վրա դրանց ներազդեցության առանձնահատկությունները:
- Քննության առնել հանրային քաղաքականության բնագավառում որոշումների

կայացման հարացույցները և հիմնավորել նոր հարացույցի՝ արտաքին արհեստավարժ կազմակերպությունների վերլուծական-փորձագիտական աջակցմամբ որոշումների կայացման ու լեգիտիմացման անհրաժեշտությունը:

- Վեր հանել քաղաքական որոշումների կայացման խնդրային առարկայական դաշտի հետ կապված հիմնահարցերը, որոշումների դաշտի ընդլայնումն ու բարդացումը՝ առանձնացնելով իբրև հանրային քաղաքականության բնագավառում կայացվող որոշումների ռիսկերի մեծացման հիմնախնդիր, իսկ դրա նվազեցման գիտակցումը՝ իբրև հանրային քաղաքականության բնագավառում արհեստավարժ վերլուծական-փորձագիտական ունակություններ ունեցող կազմակերպությունների ներգրավման առանցքային շարժառիթ:
- Բացահայտել հանրային քաղաքականության և հասարակական կարծիքի վրա ուղեղային կենտրոնների ազդեցության հիմնական մոտեցումներն ու գործիքակազմը և հիմնավորել քաղաքական որոշումների փաստարկվածության և հանրային լեգիտիմացման առումով դրանց ներդրման անհրաժեշտությունը:
- Դիտարկել արդի հասարակական-քաղաքական, ռազմական և անվտանգային պայմաններում որոշումների մշակման, ընդունման, ընթացքի փորձաքննության և հանրայնացման գործառույթներն արհեստավարժ ուղեղային կենտրոնների պատվիրակման հնարավորություններն ու հետևանքները:
- Քաղաքական վերնախավ-ուղեղային կենտրոններ-հասարակություն փոխհարաբերությունների կայացած մշակույթ ունեցող երկրների փորձի ուսումնասիրությամբ գնահատել ուղեղային կենտրոնների ոլորտի կայացմանը նպաստող գործոնները և ինստիտուցիոնալ միջավայրի օրինաչափությունները:
- Առաջատար ուղեղային կենտրոնների փորձի, գործառույթների, վարկանիշավորման մոտեցումների և հանրային քաղաքականության բնագավառում ներգրավման ձևաչափերի ուսումնասիրությամբ բացահայտել ուղեղային կենտրոնների ինստիտուցիոնալ կայացման ներքին գործոնները և գնահատել արտաքին

միջավայրի օրինաչափությունների հետ դրանց փոխառնչությունները:

- Արժևորել ՀՀ-ում քաղաքական որոշումների մշակման, կայացման, փորձաքննության և հանրային լեգիտիմացման գործընթացներում ուղեղային կենտրոնների ներգրավման և ինստիտուցիոնալացման ընթացակարգերը՝ որպես փաստարկված և հանրայնորեն ընկալելի որոշումների կայացման նախապայման:
- Գնահատել ՀՀ ուղեղային կենտրոնների ոլորտը՝ հանրային քաղաքականության որոշումների սպասարկման պատրաստվածության և լեգիտիմացման նպատակով, հանրային վարկանիշի ու հասարակության հետ արդյունավետ հաղորդակցությունների առկայության համատեքստում:

**Հետազոտության մեթոդաբանությունը**: Ատենախոսության մեթոդաբանության հիմք են հանդիսացել գիտական հետազոտության և քաղաքական գիտության ընդհանուր տրամաբանական, էմպիրիկ, տեսական իմացաբանության և առանձնահատուկ մեթոդաբանական սկզբունքներն ու եղանակները: Մասնավորապես գիտական հետազոտության ընդհանուր տրամաբանական մեթոդաբանական մոտեցումներից հետազոտության ընթացքում կիրառվել են պատմական, մշակութաբանական, ինստիտուցիոնալ, արժեքանորմատիվային, համեմատական, համակարգային, կառուցվածքագործառութային, ընդհանրացման և վիճակագրական ուսումնասիրության մեթոդները: Պատմական մեթոդը թույլ է տվել բացահայտել կառավարող վերնախավի որոշումների ինտելեկտուալ սպասարկման մոտեցումների փոփոխությունների ու զարգացման օրինաչափությունները պետական կառավարման և հանրային քաղաքականության մեջ որոշումների կայացման մոտեցումների ֆորմացիոն փոփոխությունների տարբեր փուլերում: Այն հնարավորություն է տվել բացահայտելու նաև հանրային քաղաքականության բնագավառում որոշումների ինտելեկտուալ սպասարկման առանձնահատկությունները ուղեղային կենտրոնների ծագման, էվոլյուցիոն զարգացման և կայացածության փուլերում: Մշակութաբանական մեթոդը հնարավորություն է ընձեռել հանրային քաղաքականության բնագավառում ուղեղային

կենտրոնների ներգրավվածությունը դիտարկելու քաղաքական մշակույթի առանձնահատկությունների համատեքստում: Ինստիտուցիոնալ մեթոդը նպաստել է ուղեղային կենտրոնների և դրանց գործունեության ինստիտուցիոնալ միջավայրի փոխառնչությունների բացահայտմանը, ինչպես նաև ուղեղային կենտրոնների ոլորտի զարգացմանը նպաստող ու զարգացմանը խոչընդոտող ինստիտուտների վերհանմանն ու նկարագրմանը: Արժեքանորմատիվային մեթոդի կիրառմամբ սահմանվել է հանրային քաղաքականության բնագավառում ուղեղային կենտրոնների ներգրավվածության էտալոնային մոդելը, և գնահատվել է ՀՀ-ում նման մոդելին հասնելու հավանականությունը, նախանշվել են հանրային քաղաքականության բնագավառում որոշումների ժողովրդավարացման ու դրանց ինտելեկտուալ սպասարկման մոդելի կիրառականության ապահովման հիմնական ուղիները: Համեմատական մեթոդը նպաստել է պետական կառավարման տարբեր մոդելներ որդեգրած և ժողովրդավարական ինստիտուտների զարգացման տարբեր մակարդակներ ունեցող երկրների հանրային քաղաքականության բնագավառում որոշումների կայացման գործընթացների ու մոտեցումների առանձնահատկությունների, ինչպես նաև կայացվող որոշումների ինտելեկտուալ սպասարկման (վերլուծական-փորձագիտական) առանձնահատկությունների ու ընդհանրությունների բացահայտմանը: Համակարգային մեթոդը հնարավորություն է ընձեռել հանրային քաղաքականության որոշումների կայացման ու լեգիտիմացման գործընթացը դիտարկելու համալիր ամբողջության մեջ, ինչպես նաև ուսումնասիրելու քաղաքական որոշումների մշակման, կայացման, լեգիտիմացման ու կիրարկման ընթացքի փորձագիտական գնահատման աշխատանքներում ուղեղային կենտրոնների ներգրավվածությունը՝ հստակեցնելով հանրային քաղաքականության բնագավառում ուղեղային կենտրոնների գործառույթներին առնչվող խնդիրները:

Կառուցվածքագործառութային մեթոդի կիրառմամբ առանձնացվել և վերլուծվել են քաղաքական որոշումների կայացման, հանրայնացման և կիրառման գործընթացները,

դրանց փոխառնչությունները: Վեր են հանվել այդ գործընթացներում որոշումների ներքին ու հանրային փաստարկման նպատակով հանրային քաղաքականության սուբյեկտների վերլուծական, տեղեկատվական ու հաղորդակցական կարիքները, իսկ ուղեղային կենտրոնների գործառնական վերլուծության արդյունքներով հստակեցվել են ուղեղային կենտրոնների ներգրավմամբ այդ կարիքների բավարարման հնարավոր ուղղությունները: Ընդհանրացման մեթոդի կիրառումը հնարավորություն է ընձեռել իրականացնելու ոլորտի խնդիրներով զբաղվող հետազոտողների առաջադրած մոտեցումների ընդհանրացումներ, ինչը նպաստել է ուղեղային կենտրոնների սեփական բնորոշման ձևակերպմանը: Մյուս կողմից, մեթոդի զուգակցումն աքսիոմատիկ մեթոդի հետ հնարավորություն է ընձեռել դուրս բերելու ոլորտի զարգացածության, հանրային քաղաքականության բնագավառում ուղեղային կենտրոնների գործունեության ելակետային դրույթները, որոնք ձևակերպվել են իբրև հիպոթեզներ՝ ստուգելու համար ոլորտի վրա դրանց իրական ազդեցության չափը: Վիճակագրական մեթոդներից կիրառվել են գործոնային ու կլաստերային վերլուծության մեթոդները, ինչը հնարավորություն է ընձեռել ուսումնասիրելու ուղեղային կենտրոնների զարգացածության և երկրների քաղաքական, տնտեսական, մշակութային ու տեխնոլոգիական միջավայրերի գործոնների միջև առկա կապերը, դրանց ընդհանրությունների հիման վրա առանձնացնելու երկրների խմբեր և սահմանելու ոլորտի զարգացմանն իրապես նպաստող գործոնների համախումբը: Ըստ այդմ, վիճակագրական և պատճառահետևանքային մեթոդների ինտեգրմամբ վերլուծվել են ուղեղային կենտրոնների կայացածության ու երկրների մրցունակության տարբեր վարկանիշներում ներառված միևնույն խումբ երկրների առաջատար ու հետնապահ դիրքերի ձևավորման պատճառները, ինչը հնարավորություն է ընձեռել հիմնավոր ներկայացնելու ուղեղային կենտրոնների ինստիտուցիոնալ կայացմանը նպաստող միջավայրի առանցքային գործոնները: Իսկ հարցման մեթոդը կիրառվել է ուղեղային կենտրոնների թվաքանակով երկրորդը համարվող

և ներկայումս բուռն զարգացող Չինաստանի փորձագիտական շրջանակների մոտեցումների ընդհանրացման արդյունքներով ոլորտի առաջատար կենտրոնների բացահայտման, դրանց, ըստ իրենց կարևորության և ազդեցիկության, դասակարգման և տարբեր վարկանիշային աղյուսակներում հերթականության շեղումների վերհանման նպատակով:

Գիտական հետազոտության էմպիրիկ սկզբունքներից և մոտեցումներից հետազոտության ընթացքում կիրառվել են դիտարկման և նկարագրական մեթոդները: Մասնավորապես դիտարկման, նկարագրման և պատճառահետևանքային մեթոդների ինտեգրումը կոնտենտ (փաստաթղթերի) վերլուծության մեթոդի հետ նպաստել է անմիջապես առաջատար ուղեղային կենտրոններից դրանց գործունեության հաշվետվությունների հավաքագրմանը, որոնց արդյունքների վերլուծությամբ հնարավոր է դարձել սահմանել ու նկարագրել դրանց արդի գործառույթների ամբողջությունն ու հանրային քաղաքականության բնագավառում իրական ներգրավվածության աստիճանը: Տեսական իմացաբանության ուսումնասիրության մեթոդներից կիրառվել է հիպոթետիկ-դեդուկտիվ մեթոդը, ինչը հնարավորություն է ընձեռել առաջադրել ու ոլորտի զարգացման միմյանց փոխկապակցված տարաբնույթ հիպոթեզներ, որոնց հերքման կամ հաստատման միջոցով իբրև էմպիրիկ ճշմարտություններ դուրս են բերվել ոլորտի ինստիտուցիոնալ զարգացմանը նպաստող առանցքային գործոնները:

**Հիմնախնդրի գիտական մշակվածության աստիճանը:** Քաղաքական խորհրդատվության և որոշումների կայացման գործընթացի ինտելեկտուալ ապահովման թեմատիկան հնագույն ժամանակներից ի վեր մշտապես եղել է գիտության աշխարհի ներկայացուցիչների և քաղաքական վերնախավի ուշադրության կենտրոնում: Դեռևս Պլատոնն իր «Պետություն» երկխոսության մեջ, անդրադառնալով կառավարման հիմնահարցերին, փիլիսոփաներին էր առաջնային դեր հատկացնում «իդեալական պետության» կառավարման գործում[1]: Աշխարհի տարբեր երկրների միապետներին, իրենց

[1] ***Платон***, Государство // Изд-во ЛЕНАНД, М., 2017, 536 с.

բազմաբնույթ նախաձեռնությունների ժամանակ օժանդակել և ուղեկցել են իմաստուններն ու հատուկ հարցերով խորհրդականները: Սակայն, եթե հատուկ գիտելիքներով օժտված մարդկանց անհատական մակարդակով պետության կառավարման գործընթացում ներգրավումը տեղի է ունեցել թերևս բոլոր ժամանակներում, ապա ինստիտուցիոնալ և հաճախ ինքնավար գործող արհեստավարժ հաստատությունների՝ ուղեղային կենտրոնների հիմնումը և դրանց ինտելեկտուալ արտադրանքից օգտվելու մշակույթը սկսել է սկզբնավորվել միայն XX դարի սկզբին:

Այդ առումով ուղեղային կենտրոնների գործունեության խնդիրներին նվիրված ուսումնասիրությունները և հրապարակումները սկսում են ի հայտ գալ միայն հարաբերականորեն նոր ժամանակաշրջանում՝ 1970-ական թվականներից սկսած,և առավել մեծ թափ են ստանում XX դարի վերջին: Այս համատեքստում իրենց հիմնարար ոճով ուղեղային կենտրոնների վերաբերյալ առաջին աշխատանքներից հարկ է առանձնացնել 1970 թ. Փոլ Դիքսոնի հրապարակած «Մտքի ֆաբրիկաները»[2] և Իննա Շեյդինայի «ԱՄՆ. ուղեղային կենտրոնները ռազմավարության ծառայության մեջ»[3] աշխատությունները: Մասնավորապես Փ. Դիքսոնի աշխատանքում նկարագրվում են տարբեր ուղեղային կենտրոնների ծագումն ու զարգացումը: Իր հերթին Ի. Շեյդինան անդրադառնում է ԱՄՆ-ի գիտահետազոտական հաստատությունների համակարգի ստեղծմանը և արտաքին ու ներքին քաղաքականության մշակման, որոշումների կայացման գործընթացում հատուկ հետազոտական հաստատությունների դերակատարությանը, երկրի պետական կառավարման համակարգի և հասարակության վրա ունեցած ազդեցությանը:

Այնուամենայնիվ, թեմայի վերաբերյալ քննարկումներն ու հրապարակումներն առավել լայն թափ են ստանում 1980-ական թվականների վերջերից և հատկապես 2000-ական թվականներից հետո: 1980-2000 թվականների գիտական հրապարակումներից հարկ է առանձնացնել Ք. Ուիվերի, Դ. Սթոունի, Դ. Աբելսոնի և Ջ. Սմիթի

---

[2] ***Диксон П.,*** Фабрики мысли // ООО «Издательство АСТ», М., 2004, 512 с.

[3] ***Шейдина И.Л.,*** США: «Фабрики мысли» на службе стратегии // Изд. «Наука», М., 1973, 192 с.

աշխատանքները[4]: Մասնավորապես Ք. Ուիվերն (1989) անդրադառնում է «ուղեղային կենտրոններ» եզրույթի սահմանման խնդիրներին, ԱՄՆ-ում նման ձևաչափով գործող կազմակերպությունների տարածման, զարգացման և քանակական աճի շարժընթացին, տիպաբանությանը, ֆինանսավորման եղանակներին, հանրային քաղաքականության մեջ իրականացվող գործառույթներին, ազդեցության ռեսուրսներին և դրանց կառավարման առանձնահատկություններին: Դ. Սթոունը (1996) նույնպես անդրադառնում է աշխարհում ուղեղային կենտրոնների տարածման հիմնախնդիրներին՝ կենտրոնանալով հիմնականում քաղաքական մտածողության և հանրային քաղաքականության վրա վերջիններիս ունեցած ազդեցության խնդիրների վրա: Միաժամանակ նկարագրվում են փորձագիտական ցանցերի, էպիստեմիկ համայնքների և քաղաքականության հետ ուղեղային կենտրոնների փոխառնչությունների հետ կապված հարցերը: Այս համատեքստում հատկանշական է նաև Դ. Աբելսոնի (1996) աշխատանքը, որտեղ հիմնականում շեշտադրվում է ամերիկյան ուղեղային կենտրոնների դերակատարությունը երկրի արտաքին քաղաքականության մշակման և իրականացման գործում՝ առանձնացնելով այդ գործընթացում ուղեղային կենտրոնների մասնակցության ձևաչափերը և դրանց ներգրավման կարևորությունը: XX դարի վերջին տասնամյակում հրատարակված գիտական հրապարակումների շարքում հարկ է առանձնացնել նաև Ջ. Սմիթի (1991) աշխատությունը, որում հեղինակը մանրամասնորեն անդրադառնում է այն հիմնական նախապայմանների ուսումնասիրությանը, որոնց առկայությունը նպաստեց ուղեղային կենտրոնների ձևավորմանը, այդ թվում՝ ԱՄՆ-ում փորձագիտական գիտելիքի նկատմամբ աճող պահանջարկի պատճառներին:

2000-ական թվականներին ուղեղային կենտրոնների նկատմամբ աճող հետաքրքրությանը զուգահեռ հետևողականորեն

[4] Տե՛ս ***Weaver R.K.***, The Changing World of Think Tanks // PS: Political Science and Politics, N 22, 1989, pp. 563-578; ***Stone D.***, Capturing the Political Imagination // Think Tanks and the Policy Process, Portland, Oregon: Frank Class, 1996, 331 p.; ***Abelson D.,*** American Think Tanks and their Role in the U.S. Foreign Policy // St. Martins Press, New York, 1996, 208 p.; ***Smith J.***, The idea brokers: Think tanks and the rise of the new policy elite // New York, Free Press, 1991, 313 p.

աճում էր այդ երևույթի ուսումնասիրության նկատմամբ ակադեմիական աշխարհի ներկայացուցիչների հետաքրքրությունը: Հրապարակված բազմաթիվ գրքերի շարքում հարկ ենք համարում առանձնացնել Ջ. Մաք-Գանի, Ք. Ուիվերի, Է. Ռիչի, Դ. Սթոունի և Ա. Դենիամի, Դ. Աբելսոնի, Ռ. Սթրայկի, Ռ. Հասանի, Թ. Մեդվեդզի, Է. Սելեի աշխատությունները[5]: Մասնավորապես Ջ. Մաք-Գանը և Ք. Ուիվերն (2002) անդրադառնում են աշխարհի տարբեր տարածաշրջաններում ուղեղային կենտրոնների տարածումը և դրանց զարգացումը խոչընդոտող հիմնախնդիրներին՝ հատկապես դրանց արդյունավետ գործունեությանը նպաստող և աննպաստ քաղաքական մշակույթների առանձնահատկություններին: Հեղինակների համոզմամբ յուրաքանչյուր երկրում ուղեղային կենտրոնների զարգացման, անկախության մակարդակը, ինչպես նաև թողարկվող ինտելեկտուալ արտադրանքի որակը մեծապես կախված են տվյալ պետության քաղաքական համակարգի ժողովրդավարության աստիճանից: Է. Ռիչն (2004) անդրադառնում է ուղեղային կենտրոնների զարգացման հիմնախնդիրներին, ֆինանսական հնարավորություններին, տիպաբանությանը, մասնագիտական ուղղվածությանը, հանրային քաղաքականության մեջ այդ հաստատությունների դերակատարությանն ու ԱՄՆ-ի կողմից իրականացվող քաղաքականության վրա ազդեցությանը: Դ. Սթոունի և Է. Դենիամի (2004) կազմած արժեքավոր ժողովածուում տարբեր հեղինակների հրապարակումները վերաբերում են առանձին երկրներում (Գերմանիա, Իտալիա, Ֆրանսիա, Չինաստան և այլն) և տարբեր քաղաքական

---

[5] Տե՛ս ***McGann G. James, Weaver R. Kent,*** Think Tanks and civil societies: catalyst for ideas and action // Transaction Publishers, New Brunswick, 2002, 617 p.; ***Rich A.***, Think Tanks, Public Policy, and the Politics of Expertise // Cambridge University Press, New York, 2004, 272 p.; Think Tank traditions: Policy research and the politics of ideas, edited by ***Stone D. and Denham A.***, Manchester University Press, Manchester, 2004, 322 p.; ***Abelson D.E.,*** A Capitol Idea: Think Tanks and US Foreign Policy // Montreal: McGill-Queen's University Press, 2006, 392 p.; ***Raymond J. Struyk***, Managing Think Tanks: Practical Guidance for Maturing Organizations // Expanded Second Edition, OSI/LGI and Urban Institute, Budapest, 2006, 350 p.; ***McGann J.***, Think Tanks and Policy Advice in the US // Academics, Advisors and Advocates. Rutledge, 2007, 208 p.; ***Md. Rahat Hasan,*** Foreign Policy and Strategic Issues: Think Tanks in US and South Asia // New Century Publications, New Delhi, India, 2012, 195 p.; ***Medvetz Th.***, Think Tanks in America // University Chicago Press, USA, 2012, 344 p.; ***Selee A.***, What should Think Tanks Do? A Strategic Guide to Policy Impact // Stanford University Press, Stanford, USA, 2013, 128 p.; ***McGann J.***, The Fifth Estate: Think Tanks, Public Policy and Governance // Brookings Institution Press, Washington D.C., 2016, 230 p..

մշակույթներում ուղեղային կենտրոնների գործունեության առանձնահատկությունների: Այս համատեքստում հարկ է ընդգծել, որ առանձին երկրների ուղեղային կենտրոնների ոլորտին նվիրված աշխատանքների շարքում առանձնանում են նաև Ռազմավարական հետազոտությունների ռուսաստանյան ինստիտուտի հրապարակումները[6], որոնք նվիրված են հետխորհրդային երկրներում և Չինաստանում ուղեղային կենտրոնների զարգացման առանձնահատկություններին: Մեծ Բրիտանիայի ուղեղային կենտրոնների ոլորտն ուսումնասիրելու առումով արժեքավոր է նաև Է. Դենհամի և Մ.Գարնետի աշխատությունը[7] և այլն:

Դ. Աբելսոնի (2006) հրապարակման տիրույթում են գտնվում ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության մեջ ուղեղային կենտրոնների և դրանց փորձագետների ներգրավվածության և ազդեցության հիմնախնդիրները: Իր ուրույն ուսումնասիրության ոլորտով առանձնանում է Ռ. Սթրայկի (2006) հիմնարար աշխատությունը, որը նվիրված է ուղեղային կենտրոնների կառավարման հիմնախնդիրներին: Որպես ուղեղային կենտրոնների կառավարման արդյունավետության հիմնական գործոններ՝ հեղինակը մասնավորապես առանձնացնում է փորձագետների խրախուսման մեխանիզմների մշակումը, փորձագետների մասնագիտացման բարձրացմանը միտված քաղաքականությունը, հաստատության կառավարման կոլեգիալ բնույթը՝ հնարավորինս խուսափելով աշխատակազմում բյուրոկրատական և աստիճանակարգային մոտեցումներից, ինտելեկտուալ արտադրանքի որակի հսկողությունը (մասնավորապես գրախոսության մեխանիզմի ներդրումը), զանգվածային լրատվական միջոցների, հասարակության և քաղաքական վերնախավի հետ հաղորդակցության, ֆինանսավորման աղբյուրների հայթայթման (fundraising) և բազմազանեցման համապարփակ ռազմավարության մշակումը:

[6] ***Гузенкова Т. С., Петровская О. В., Александров Д. А., Попов Д. С., Неменский О. Б., Каширин В. Б., Иванов В. А., Ипполитов И. В., Шевченко А. М., Сургуладзе В. Ш., Лихачев М. А., Андреева Е. С., Крамарова Е. Н.***, «Мозговые центры» в странах СНГ и Грузии: структура, задачи, основные тенденции развития // «Проблемы национальной стратегии», № 1 (34), М., 2016, с. 11-67; ***Комиссина И.Н.***, Научные и аналитические центры Китая // Рос. ин-т стратег. исслед., М., РИСИ, 2012, 266 с.:

[7] ***Denham A., Garnett M.***, British think-tanks and the climate of opinion // UCL Press Limited, London, 1998, 232 p.

Զ. Մաք-Գանի (2007) աշխատությունը նվիրված է ԱՄՆ-ում քաղաքական խորհրդատվության ինստիտուտի զարգացման հիմնախնդիրներին, շահապաշտպան քաղաքականությանը, մասնավորապես ազատական և պահպանողական ուղղվածության ուղեղային կենտրոնների զարգացմանը, մասնագիտական կողմնորոշում ունեցող հաստատություններին և ընդհանուր քաղաքական միջավայրի ազդեցությանն ուղեղային կենտրոնների կողմից անկախ փորձագիտական, վերլուծական և խորհրդատվական ծառայությունների մատուցման վրա: Հեղինակն առավել խոր անդրադարձ է կատարում ԱՄՆ-ի առաջատար 30 ուղեղային կենտրոնների գործունեության ուսումնասիրության վրա: Ռ. Հասանի աշխատությունը (2012) նվիրված է ուղեղային կենտրոնների սահմանման և տիպաբանության խնդիրներին: Հեղինակն անդրադարձ է կատարում ԱՄՆ-ում ուղեղային կենտրոնների ստեղծման պատմությանը, զարգացմանը, մասնագիտական ուղղվածության քննարկմանը: Միաժամանակ վեր են լուծվում որոշ տարածաշրջաններում (Հեռավոր Արևելք, Լատինական Ամերիկա, Եվրոպա, Աֆրիկա և այլն) ոլորտի զարգացման առանձնահատկությունները: Թոմաս Մեդվեդն (2012) ուղեղային կենտրոնները դիտարկում է որպես ԱՄՆ-ի քաղաքական երկխոսության շարժիչ ուժ և առանցքում է պահում իր մոտեցումն առ այն, որ այդ հաստատություններին հաջողվում է ազդել քաղաքական միջավայրի, կառավարության, մեդիադաշտի, հասարակության և քաղաքական վերնախավի կողմից իրականության ընկալման ու քաղաքական ուղենիշների սահմանման վրա՝ միաժամանակ վերափոխելով ինտելեկտուալների քաղաքական դերը: Այս թեմայի ուսումնասիրության համատեքստում արժեքավոր է նաև Է. Սելեի հրապարակումը, որն իրականացվել է ԱՄՆ-ի առաջատար ուղեղային կենտրոնների ղեկավարների հարցազրույցների հիման վրա: Աշխատանքն առանձնանում է իր գործնական բնույթով, ինչը հատկապես արժեքավոր է ուղեղային կենտրոնների կառավարման գործում ներգրավված մասնագետների համար: Զ. Մաք-Գանը (2016) հանգամանորեն անդրադառնում է ԱՄՆ-ի տարբեր վարչակարգերի օրոք պետության և ուղեղային կենտրոնների

փոխառնչությունների հիմնախնդրին՝ հատկապես կենտրոնանալով «պտտվող դռների» քաղաքականության կիրառման գործընթացի վրա:

Հետխորհրդային երկրների շարքում այս առումով կարելի է առանձնացնել Ռուսաստանում ուղեղային կենտրոնների վերաբերյալ ակադեմիական հրապարակումները: ՌԴ-ում վերջին երկու տասնամյակի ընթացքում ևս մեծ տարածում են ստանում ուղեղային կենտրոններին նվիրված ուսումնասիրությունները: Այս համատեքստում հարկ է կարևորել Տ. Կոնոպլիչի, Դ. Զայցևի, Ն. Մեդուշևսկու և Դ. Իվանովի հաջողությամբ պաշտպանած ատենախոսությունները, որոնք վերաբերում են ուղեղային կենտրոնների պատմական զարգացման և հանրային քաղաքականության մեջ գործունեության առանձնահատկություններին[8]: Ուղեղային կենտրոնների ուսումնասիրության գործում մեծ կարևորություն ունեն Ա. Սունգուրովի և Ա. Բալայանի տարբեր աշխատությունները[9], որոնցում հեղինակներն անդրադառնում են «ուղեղային կենտրոն» հասկացությանը, այս երևույթի սահմանմանը, աշխարհի տարբեր երկրներում այս հաստատությունների զարգացմանը՝ հատկապես կենտրոնանալով Ռուսաստանում ուղեղային կենտրոնների ոլորտում արձանագրվող շարժընթացի ուսումնասիրության վրա:

Ուղեղային կենտրոնների գիտական հրապարակումները կարելի է բաժանել երկու հիմնական խմբի: Առաջին խումբ կարող ենք ներառել աշխատանքներ, որոնք հիմնականում անդրադառնում են ուղեղային կենտրոնների աշխատանքների կազմակերպական կողմին, այդ

---

[8] Տե՛ս ***Коноплич Т.К.***, Роль «мозгового треста» Ф.Д. Рузвельта в становлении административно-политического консалтинга в США // Дис. на соиск. уч. ст. канд. ист. наук., 07.00.03 – всеобщая история, Волгоград, 2000, 280 с.; ***Зайцев Д.Г.***, Аналитические центры как субъекты политического процесса // Дис. на соиск. уч. ст. канд. пол. наук., 23.00.02 – Политические институты, этнополитическая конфликтология, национальные и политические процессы и технологии. М., 2009, 215 с.; ***Медушевский Н.А.,*** Экспертное сообщество в политической сфере в конце XX–начале XXI века // Дис. на соиск. уч. ст. канд. пол. наук. по спец. 23.00.02 - «Политические институты, процессы технологии», М., 2011, 207 с.; ***Иванов Д.Ю.***, Формирования политической аналитики негосударственных аналитических центров в современной России // Дис. на соис. уч. ст. канд. пол. н., специальность 23.00.02 – Политические институты, процессы и технологии, Санкт-Петербург, 2013, 194 с.

[9] Տե՛ս ***Сунгуров А.Ю.***, Как возникают политические инновации: «фабрики мысли» и другие институты-медиаторы // М.: Политическая энциклопедия, 2015, 383 с.; ***Балаян А.А., Сунгуров А.Ю.***, Фабрики мысли: международный и российский опыт; учеб. пос., СПб., Отдел оперативной полиграфии НИУ ВШЭ – СПб, 2014, 236 с.; ***Балаян А.А., Сунгуров А.Ю.***, Фабрики мысли и экспертные сообщества // СПб.: Алетейа, 2016, 240 с.

թվում՝ այդ հաստատությունների ծագման և զարգացման պատճառներին, վերջիններիս ազդեցության խնդիրներին: Այս աշխատանքներում հանրային քաղաքականության հետազոտական հաստատությունները կամ ուղեղային կենտրոնները տարբերակվում են ակադեմիական հետազոտական հաստատություններից և լոբբիստական կազմակերպություններից, հաճախ նաև կառավարության կազմում գործող հետազոտական ստորաբաժանումներից:Դրանք կենտրոնանում են ուղեղային կենտրոնների կազմակերպական բաղադրիչների վրա և հատկապես այնպիսի հարցերի ուսումնասիրման ուղղությամբ, ինչպիսիք են ուղեղային կենտրոնների հաջողության նախադրյալները և կառավարման առանձնահատկությունները, ֆինանսավորման եղանակները, դրանց կողմից արտադրված ինտելեկտուալ արտադրանքը կիրառող թիրախային լսարանը և ազդեցության հիմնական խմբերը:

Ուղեղային կենտրոնների վերաբերյալ հրապարակված գիտական աշխատանքների երկրորդ խումբ ներառված են այնպիսի աշխատանքներ, որոնք ուղեղային կենտրոնները դիտարկում են որպես քաղաքական գործընթացի մասնակիցներ և միաժամանակ փորձում են բացահայտել փորձագիտության դեր ու նշանակությունը որոշումների կայացման գործընթացում: Դրանք քննարկում են ուղեղային կենտրոնների ինտելեկտուալ արտադրանքի նշանակությունը քաղաքական համակարգում:

Այսպիսով, կարող ենք փաստել, որ թեև արտերկրի ուղեղային կենտրոնների ոլորտի վերաբերյալ առկա են բազմաթիվ գիտական աշխատանքներ, այնուամենայնիվ հիմնարար աշխատանքներն այս ոլորտում հարաբերականորեն շատ չեն,և այս թեման դեռևս կարոտ է առավել լայն և բազմակողմանի ուսումնասիրության: Քննարկվող աշխատանքների հիմնական մասը վերաբերում է տարբեր երկրներում առկա ուղեղային կենտրոնների նկարագրությանը և դրանց զարգացման առանձնահատկություններին, միաժամանակ առավել քիչ անդրադարձ է կատարվում ուղեղային կենտրոնների միջնորդական, հաղորդակցական դերին իշխանության, ակադեմիական գիտության և հասարակության միջև: Հայրենական քաղաքական գիտության մեջ ուղեղային

կենտրոնների ոլորտն առավել թույլ է ուսումնասիրված, իսկ հայրենական ուղեղային կենտրոններին նվիրված աշխատանքներ, այդ թվում՝ այդ կառույցների կայացման և զարգացման պատմությանը, հանրային քաղաքականության ոլորտում վերջիններիս տեղին ու դերին, գործառույթներին, հետազոտությունների ուղղվածությանը, ազդեցությանը, առանձնահատկություններին, փոխառնչություններին պետական կառավարման համակարգի, քաղաքական վերնախավի և հասարակության հետ գրեթե բացակայում են: Բացառություն են կազմում մասնավորապես ՀՀ պաշտպանության նախարարության Պաշտպանական ազգային հետազոտական համալսարանի պետ, ք.գ.դ., գեներալ-լեյտենանտ Հ. Քոթանջյանի տարբեր տարիների հրապարակումները[10], «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի և Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի «Ամբերդ» հետազոտական կենտրոնի կողմից համատեղ իրականացված «Տարածաշրջանի հետազո-տական կենտրոնները» հետազոտությունը, որի արդյունքում լույս են տեսել տարածաշրջանի և Հայաստանի ուղեղային կենտրոնների գործունեությանն ու դերակատարությանը նվիրված թվով երկու հրապարակում[11], Կովկասի

---

[10] Տե՛ս, ***Քոթանջյան Հ.,*** Պաշտպանական կրթության բարեփոխմամբ՝ ռազմավարական փոփոխությունների կառավարումը Հայաստանում «խելացի ուժի» զարգացման տեսանկյունից // «Աշխատանքային տետրեր», ՀՀ ՊՆ Դ. Կանայանի անվ. Ազգային ռազմավարական հետազոտու-թյունների ինստիտուտի «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսի հավելված, N 4 (24), 2012, էջ 9-24: ***Քոթանջյան Հ.,*** ԱՄՆ-ի և ՌԴ առաջատար ուղեղային կենտրոնների հետ համագործակցությամբ ՀՀ ՊՆ Ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտի կերպափոխումը ՀՀ ՊՆ Պաշտպանական ազգային հետազոտական համալսարանի // «Աշխատանքային տետրեր», ՀՀ ՊՆ Դ. Կանայանի անվ. Ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտի «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսի հավելված, N 3 (35), 2015, էջ 5-10: ***Քոթանջյան Հ.,*** Հայ գիտության զարգացումը Հայաստանի ազգային անվտանգության ռազմավարության տրամաչափի մեջ // Զեկույց 2008թ. նոյեմբերի 5-ին ՀՀ ԱԺ գիտության և կրթության հանձնաժողովում ազգային անվտանգության համատեքստում գիտության հիմնախնդիրներին նվիրված լսումներում: URL: http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=2454&sphrase_id=59818

[11] Տե՛ս ***Մելիքյան Զ., Բարսեղյան Ա., Սիմավորյան Ա.,*** Տարածաշրջանի հետազոտական կենտրոնները (Վրաստան,

ինստիտուտի կողմից հրապարակված «Հասարակագիտական և հումանիտար գիտություն-ներում հետազոտական հնարավորությունների գնահատումը Հայաստանում» հետազոտությունը[12], ինչպես նաև այս ատենախոսության հեղինակի տարբեր տարիների գիտական հրապարակումները: Վերոնշյալի համատեքստում անհրաժեշտ է ընդգծել ք.գ.դ., գեներալ-լեյտենանտ Հ. Քոթանջյանի անձնական նշանակալի ներդրումն ու աշխատությունների կարևորությունը հայ անվտանգային քաղաքագիտության և ռազմավարական մտքի զարգացման գործում[13], ինչպես նաև Հայաստանում ռազմավարական նշանակության աննախադեպ քաղաքագիտական-անվտանգային ուղեղային կենտրոնի՝ ՀՀ ՊՆ Պաշտպանական ազգային հետազոտական համալսարանի հիմնադրման և կայացման գործում, որը դարձավ «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարության» և «Հայաստանի Հանրապետության ռազմական դոկտրինի» միջգերատեսչական մշակման գիտամեթոդաբանական կենտրոնը:

**Ատենախոսության գիտական նորույթը:** Աշխատանքի շրջանակներում առանձնացված հետազոտական խնդիրների հաղթահարումը թույլ է տալիս առաջ քաշել մի շարք տեսական ու գործնական նշանակություն ունեցող գաղափարներ ու դրույթներ, որոնցից գիտական նորույթ են պարունակում հետևյալները.

---

Ադրբեջան, Թուրքիա) // Եր., «Նորավանք» ԳԿՀ, 2015, 242 էջ: ***Աթոյան Վ., Օհանյան Ս., Մալքջյան Ա., Մովսիսյան Շ.***, Հայաստանի բուհական վերլուծական կենտրոնները // Եր., «Տնտեսագետ», (Ամբերդ մատենաշար N27), 2015, 58 էջ:

[12] An Assessment of Research Capacities in Social Sciences and Humanities in Armenia // Caucasus Institute Research Papers, N 4. Yerevan, 2011, 48 p. URL: http://c-i.am/research/paper%204_eng.pdf

[13] Տե՛ս, մասնավորապես, ***Քոթանջյան Հ.,*** Հայաստանի ազգային անվտանգության մշակման ուղեցույցները տարածաշրջանային անվտանգության ճարտարապետության համատեքստում // Եր., ՀՀ ՊՆ Դ. Կանայանի անվան Ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտ, 2008, 604 էջ: ***Քոթանջյան Հ.,*** Հակամարտության էթնոքաղաքագիտություն. Հայաստանի ռազմական քաղաքականության և ազգային անվտանգության հիմունքները // Եր., ՀՀ ՊՆ Դ. Կանայանի անվան Ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտ, 2010, 764 էջ:

- Հանրային քաղաքականության որոշումների ինտելեկտուալ սպասարկման և լեգիտիմացման պրակտիկան՝ որպես հանրային քաղաքականության գործընթացի առանձին ուղղություն, դիտարկվել է կառավարման տարբեր մոդելներ ունեցող երկրներում՝ այդ երևույթի ծագման, զարգացման և ինստիտուցիոնալ կայացածության փուլերի ամբողջության համատեքստում, ինչը թույլ է տվել բացահայտել հանրային քաղաքականության բնագավառում և քաղաքական տարբեր մշակույթներում փորձագիտական-վերլուծական հաստատությունների մասնակցության ձևաչափերն ու հանրային քաղաքականության այլ սուբյեկտների հետ փոխհարաբերությունների առանձնահատկությունները:
- Հանրային քաղաքականության խնդրային դաշտում նկատվող պերմանենտ անկայունության, անորոշության, որոշումների բարդացման և ոչ միանշանակության մեծացման շեշտադրմամբ առանձնացվել է քաղաքական որոշումների ինտելեկտուալ աջակցման պրակտիկան՝ որպես քաղաքական որոշումների ռիսկերի նվազեցման, լավարկման ու լեգիտիմացման հիմնական խնդիր:
- Տրվել է ուղեղային կենտրոնի նոր սահմանում, հստակեցվել են ուղեղային կենտրոնների փոխառնչությունները հանրային քաղաքականության այլ սուբյեկտների ու ակադեմիական շրջանակների հետ:
- Հիմնավորվել է ուղեղային կենտրոնների տիպաբանական խմբավորման որոշ փորձերի արհեստական լինելու հանգամանքը, և առաջադրվել է ինստիտուցիոնալ բնորոշիչների հիման վրա ուղեղային կենտրոնների դասակարգման մոտեցում, որի հիմքում առաջարկվել է դնել դրանց իրավական կարգավիճակը, անկախության մակարդակը, մասնագիտացումները, ֆինանսավորման ձևաչափերն ու աղբյուրները:
- Տարբեր երկրներում քաղաքական որոշումների կայացման առանձնահատկությունների և դրանց սպասարկման բնագավառում ուղեղային կենտրոնների ներգրավման փորձառության վերլուծության արդյունքներով հիմնավորվել է հանրային քաղաքականության նոր հարացույցի՝ արտաքին արհեստավարժ կազմակերպությունների

վերլուծական-փորձագիտական ու հաղորդակցական աջակցմամբ քաղաքական որոշումների կայացման ու լեգիտիմացման անհրաժեշտությունը:

- Ուղեղային կենտրոնների ոլորտի զարգացման տարբեր մակարդակ ունեցող երկրների տնտեսական, քաղաքական, հասարակական, սոցիալական, տեխնոլոգիական ու մշակութային միջավայրերի գործոնային և կլաստերային վերլուծությունների արդյունքներով սահմանվել են ուղեղային կենտրոնների զարգացմանն ու ինստիտուցիոնալ կայացմանը նպաստող միջավայրային հիմնական գործոնները և հստակեցվել են դրանցից յուրաքանչյուրի ազդեցությունն ու կարևորությունը ոլորտի զարգացման համատեքստում:
- Ուղեղային կենտրոնների գործառութային առանձնահատկությունների ու տարբեր երկրներում հանրային քաղաքականության սուբյեկտների և հասարակության վրա դրանց ներազդեցության գործիքակազմի վերլուծությամբ սահմանվել են քաղաքական վերնախավ-ուղեղային կենտրոններ-հասարակություն համագործակցության և փոխգործակցության հնարավոր ձևաչափերը:
- Հանրային քաղաքականության որոշումների կայացման ու լեգիտիմացման գործընթացում ուղեղային կենտրոնների ներգրավման միջազգային փորձի, ինչպես նաև կայացվող որոշումների տարբեր փուլերն ուղեղային կենտրոններին պատվիրակելու հետևանքների վերլուծության հիման վրա նկարագրվել են հանրային քաղաքականության բնագավառում ուղեղային կենտրոնների ակտիվ դերակատարման ստանձնման և պատվիրակման ընձեռած այլընտրանքային հնարավորությունները և առաջադրած ռիսկերը:
- Ուղեղային կենտրոնների գնահատման և ըստ անհրաժեշտության քաղաքական որոշումների բնագավառում ներգրավման նպատակով վերջիններիս վարկանիշավորման մեթոդական մոտեցումների վերլուծությամբ հիմնավորվել է ներկայումս ուղեղային կենտրոնների խմբավորման և վարկանիշավորման գործող համակարգի անկատարությունը, ինչի համատեքստում առաջարկվել է ուղեղային կենտրոնների ընտրությունն իրականացնել՝

ելնելով հետապնդվող նպատակներին դրանց մասնագիտացումների համապատասխանության սկզբունքից:

- ՀՀ արտաքին և ներքին քաղաքականության բնագավառում երբեմն ոչ ժողովրդահաճո որոշումների կայացման օբյեկտիվ անհրաժեշտությունը դիտարկվել է իբրև քաղաքական ռիսկեր պարունակող կոնֆլիկտ, ինչի լուծման և լեգիտիմության ապահովման համատեքստում պետական կառավարման համակարգում որոշումների կայացման և հանրայնացման գործընթացներում ուղեղային կենտրոնների ներգրավումը դիտարկվել է որպես իշխանության որոշումների փաստարկման և փափուկ ուժի կիրառման արդյունավետ մեխանիզմ:
- ՀՀ ուղեղային կենտրոնների հաշվառման, գործունեության ուղղությունների, ֆինանսավորման աղբյուրների, մասնագիտացումների, հանրային քաղաքականության որոշումների բնագավառում ներգրավվածության, կայացման ու հանրային կարծիքի ձևավորման վրա ազդեցության հնարավորությունների վերլուծության հիման վրա սահմանվել են ՀՀ ուղեղային կենտրոնների ոլորտի զարգացման ընթացքը, դրա վրա ազդող հիմնական գործոնները, ոլորտի արդի առանձնահատկությունները, ինչպես նաև քաղաքական վերնախավ-ուղեղային կենտրոններ համագործակցության ձևաչափերի ներդրման նախադրյալները:
- ՀՀ Ազգային անվտանգության խորհրդի որոշումների տիրույթում ԱԱԽ-ուղեղային կենտրոններ համագործակցության ձևաչափերի ներդրումը դիտարկվել է որպես ոլորտի ինստիտուցիոնալ կայացման նոր հնարավորություն, ինչի համատեքստում գնահատվել են համագործակցության ձևավորման ու խորացման հնարավորությունները և նկարագրվել են նմանատիպ ռազմավարական համագործակցության հեռանկարային ուղղությունները:

Հետազոտության գիտական նորույթով պայմանավորված պաշտպանության են ներկայացվում հետևյալ **դրույթները**.

- պետության ղեկավարի և քաղաքական վերնախավի որոշումների անհատական մակարդակում ինտելեկտուալ սպասարկման և

լեգիտիմացման պրակտիկան կիրառվել է անտիկ ժամանակաշրջանից սկսած: Այս երևույթի ինստիտուցիոնալացումը կախված չէ պետության մոդելից, քաղաքական ու ժողովրդավարական ինստիտուտների, ինչպես նաև քաղաքական մշակույթի հասունության աստիճանից: Սակայն հանրային քաղաքականության որոշումների ինտելեկտուալ սպասարկման ու լեգիտիմացման գործընթացի դրսևորումներն ու ձևաչափերն էապես կախված են վերոգրյալ գործոնների ազդեցությունից: Հասուն ժողովրդավարության երկրներում հանրային քաղաքականության որոշումների ինտելեկտուալ սպասարկման գործընթացն առավել տեսանելի է և հաճախ կիրառվում է ուղեղային կենտրոնների ջանքերով, որոնք հանրային ազդեցության մեծացման նպատակով կիրառում են մարքեթինգային տեխնոլոգիաներ: Պակաս ժողովրդավարական հասարակարգերում, չնայած այս երևույթի տարածվածությանն ու քաղաքական որոշումների վրա ուղեղային կենտրոնների ունեցած ազդեցությանը, այն առավել պակաս տեսանելի է, քանի որ ուղեղային կենտրոնները սովորաբար չեն հրապարակում իրենց հետազոտությունների, տարեկան գործունեության արդյունքները և առավել նվազ ուշադրություն են դարձնում համացանցային տիրույթում իրենց գործունեության վերաբերյալ տեղեկատվության տարածմանը: Սա կապված է նրա հետ, որ դրանք հիմնականում ակադեմիական հաստատություններ են կամ հիմնված են պետության միջոցներով ու հանրային քաղաքականության որոշումներում ներգրավվում են ոչ այնքան հանրային գործունեության, որքան պետական մարմինների հետ անմիջական կապերի շնորհիվ:

- Անկախ պետության մոդելից և քաղաքական մշակույթի հասունության աստիճանից` ներկայումս աշխարհում նկատվում է քաղաքական վերնախավի կողմից կայացվող որոշումների հետ կապված ռիսկերի վերաբաշխման միտում: Վերջինս կապված է որոշումների բարդացման, դրանց կայացման համար անհրաժեշտ տեղեկատվության ծավալների պարբերական մեծացման և ընդունվող որոշումները ոչ կառավարական հաղորդակցական ուղիներով լեգիտիմացնելու անհրաժեշտության հետ: Մյուս

կողմից, այն կապված է նաև պետական համակարգի վարչարարների երբեմն ոչ արհեստավարժության կամ պակաս մոտիվացվածության, ինչպես նաև կայացվող որոշման անմիջական սուբյեկտ հանդիսանալու հետ: Այդ պատճառով ցանկացած երկրում կարևորվում է արհեստավարժ, որոշում կայացնողից անկախ և օբյեկտիվ փորձագիտական վերլուծության արդյունքում ստացվող տեղեկատվությունը: Բացի դրանից, արդի հասարակական - քաղաքական զարգացումների ազդեցությամբ մեծանում է ներքին ու արտաքին տարբեր գործընթացներում պետության կողմից փափուկ ուժի կիրառման անհրաժեշտությունը: Վերջինը դրսևորվում է գործընկերների, ընդդի-մախոսների կամ հանրության հետ միջնորդավորված հարաբերվելու և պետությունից անկախ գործող միջնորդի հեղինակությունն օգտագործելով՝ սեփական որոշումները փաստարկելու ու դրանց նկատմամբ դրական վերաբերմունք ձևավորելու եղանակով: Ըստ այդմ, հանրային քաղաքականության որո-շումների նոր հարացույցի հիմնական խնդիր է սահմանվում քաղաքական որոշումների կայացման ու լեգիտիմացման գործընթացի ինտե-լեկտուալ-հաղորդակցական սպասարկման նոր արհեստավարժ սուբյեկտների՝ «ուղեղային կենտրոնների» կերպարի ձևավորումը:

- Ուղեղային կենտրոնների ոլորտի զարգացման և ինստիտուցիոնալ կայացման առանձնահատկությունների վերլուծությունը փաստում է, որ հանրային քաղաքականության առնչվող որոշումների ընդունման գործընթացում դրանց ներգրավվածությանը հիմնականում նպաստում են որոշումների կայացման բարդացումն ու անորոշության մեծացումը, ինչպես նաև քաղաքական առաջնորդ-ների անձնական նախաձեռնողականությունը: Սակայն ոլորտի ինստիտուցիոնալ կայացման վրա ազդում են առավել մեծ թվով միջավայրային գործոններ: Ըստ այդմ, ուղեղային կենտրոնների թվով և ազդեցիկությամբ առաջատար երկրների միջավայրային գործոնների վերլուծությունը փաստում է, որ դրանց զարգացմանն ու ինստիտուցիոնալ կայացմանը նպաստում են երկրի ներսում ֆինանսավորման աղբյուրների բազմազանությունը, արհեստավարժ կառավարման վրա հիմնվելու աստիճանը, կառավարության

գործունեության թափանցիկությունը,կրթական համակարգի, մասնավորապես բարձրագույն և շարունակական կրթության որակը,գիտահետազոտական հաստատությունների մասնագիտական մակարդակը, երկրի ներսում սեփական տաղանդներին օգտագործելու ունակությունն ու հաճախականությունը և համացանցի ներթափանցման խորությունը:

▪ Ուղեղային կենտրոնների ոլորտի դինամիկ զարգացող լինելու հանգամանքը և հաճախ դրանց հայտարարած ու փաստացի գործառույթների և մասնագիտացումների անհամապատասխանությունները ստեղծել են մի իրավիճակ, երբ հանրային քաղաքականության մյուս սուբյեկտները հաճախ զրկված են ուղեղային կենտրոնների դասակարգման և դրանց հետ փոխգործակցության հնարավոր ձևաչափերի ներքին դիտարկման հնարավորությունից: Ուղեղային կենտրոնները, չունենալով ակադեմիական հաստատություններին ներհատուկ թեմատիկ հաստատունություն, բավական արագ են փոփոխում իրենց մասնագիտացումներն ու գործունեության ուղղությունները: Իսկ մարքեթինգային տեխնոլոգիաների բուռն զարգացումը նպաստում է,որ դրանք հաճախակի փոփոխեն նաև քաղաքական որոշումների և հանրային կարծիքի վրաազդելու գործիքակազմը: Խնդրի լուծմանը չի նպաստում նաև ուղեղային կենտրոնների վարկանիշավորման գործող գլոբալ համակարգը, որի անկատարությունը բազմաթիվ երկրների դրդում է ձևավորել ուղեղային կենտրոնների վարկանիշավորման ներքին մեխանիզմներ:Խնդրի լուծման համատեքստում արդիական է դառնում փորձագիտական հարցումների մեթոդով ուղեղային կենտրոնների դասակարգումը: Սա հնարավորություն կընձեռի պետական կառավարման մարմիններին ուղեղային կենտրոնների հետ կառուցելու ռազմավարական համագործակցություն՝ ելնելով քաղաքական որոշմամբ հետապնդվող նպատակներին վերջինների մասնագիտացումների համապատասխանությունից:

▪ Ուղեղային կենտրոնների ներգրավումը հանրային քաղաքականության որոշումների կայացման ու լեգիտիմացման գործընթաց մշտապես ունեցել է երկակի ազդեցություն:Մի

կողմից՝ ուղեղային կենտրոնների ներգրավումը հանրային քաղաքականության բնագավառի որոշումների կայացման գործընթաց տանում է որոշում կայացնողների տեղեկացվածության ու առավել փաստարկված որոշումների կայացման հնարավորությունների մեծացման: Իսկ ուղեղային կենտրոնների դրական վարկանիշը և հանրային կարծիքի վրա ներազդելու մարքեթինգային տեխնոլոգիաների ակտիվ կիրառումը նպաստում են կայացվող որոշումների «երրորդ» կողմի ջանքերով լեգիտիմացմանն ու պատասխանատվության վերաբաշխմանը: Մյուս կողմից, սակայն, ուղեղային կենտրոնների անկառավարելի գործունեությունը և ֆինանսական չվերահսկվող հոսքերը հաճախ հանգեցնում են նրան, որ դրանք երբեմն չարաշահում են իրենց նկատմամբ առկա վստահությունն ու սկսում իրականացնել շահապաշտպան կազմակերպություններին ներհատուկ գործունեություն՝ համապատասխան ֆինանսավորման պարագայում փորձելով «անցկացնել» ոչ ներքին քաղաքական օրակարգում գեներացված ու երբեմն արտաքին ուժերի շահերը սպասարկող որոշումներ:

- Բարդ, հանրության կողմից դժվար ընկալվող, վիճելի որոշումների կայացման և դրանց առնչվող հանրային քննարկումների ընթացքում ՀՀ քաղաքական ղեկավարությունը երբեմն միայնակ է կրում որոշման ռիսկը և դրա պատասխանատվության բեռը՝ մնալով առանց «չեզոք» կողմերի աջակցության: Ուղեղային կենտրոնների ոչ բավարար ուշադրության հատկացումը և դրանց վերակողմնորոշումը դեպի ֆինանսավորման այլ, հաճախ օտարերկրյա աղբյուրներ կարող են ստեղծել իրավիճակ, որ վերջինները, ըստ համոզմունքի կամ ֆինանսավորողի պատվերով անընդհատ քննադատելով քաղաքական վերնախավի որոշումները, բացասական հանրային ընկալում առաջացնեն դրանց նկատմամբ: Հանրային քաղաքականությունն իրականացնողները հաճախ չեն կարողանում նման քննադատությանը հակադրել ծանրակշիռ այլընտրանք, ոչ այն պատճառով, որ դրանք արհեստավարժ չեն, այլ, որ դրանք որոշումը նախաձեռնողներն են: Իսկ չեզոք կամ կենտրոնամետ դիրքորոշում ունեցող

ուղեղային կենտրոնները, մասնակից չլինելով տվյալ որոշումների մշակումներին ու չտիրապետելով բավարար տեղեկատվության, պարզապես նախընտրում են հանդես գալ իբրև դիտորդներ այդ առանցքային բանավեճերում: Արդյունքում որոշում կայացնողներին չի ցուցաբերվում մասնագիտական որևէ օժանդակություն հանրային կարծիքի ձևավորման կամ կայացվող որոշումների լեգիտիմացման գործում: Նման իրավիճակում հանրային քաղաքականության որոշումների լավարկման և դրանց նկատմամբ վստահության ու դրական վերաբերմունքի ձևավորման համատեքստում արդիական են հանրային քաղաքականության բնագավառում ուղեղային կենտրոնների ներգրավումը և քաղաքական որոշում կայացնողներ-ուղեղային կենտրոններ համագործակցության կառուցակարգերի ներմուծումն ու դրանց ինստիտուցիոնալ կայացմանն աջակցության ցուցաբերումը:

- ՀՀ ուղեղային կենտրոնների ոլորտը դեռևս կայացման փուլում է: Պետության կողմից իջեցված պատվերների բացակայության կամ անբավարարության պատճառով ուղեղային կենտրոններից շատերը երկարաժամկետ գործունեության ծավալման միջոցներ չունեն: Դրանք հիմնականում ֆինանսավորվում են արտերկրի դրամաշնորհներով՝ իրենց վերլուծական-փորձագիտական կարողությունները ծառայեցնելով արտաքին շրջանակներում ձևավորված օրակարգի սպասարկմանը: Մյուս կողմից՝ դրանք հանրային քաղաքականության որոշումների բնագավառում հիմնականում ունեն ներգրավվածության ցածր աստիճան և կայացվող որոշումների ու հանրային կարծիքի ձևավորման վրա ազդեցության սահմանափակ հնարավորություններ: Միևնույն ժամանակ երկրում առկա է քաղաքական որոշումների ինտելեկտուալ սպասարկման ձևաչափերի ներդրման բարենպաստ միջավայր, ինչը կապված է ՀՀ Ազգային անվտանգության խորհրդին սահմանադրորեն նոր լիազորություններով օժտելու հետ: Ըստ էության, ԱԱԽ-ն կարող է դառնալ քաղաքական որոշում կայացնողներ-ուղեղային կենտրոններ համագործակցության զարգացման հիմնական «քարշակներից» մեկը:

**Ատենախոսության տեսական և գործնական նշանակությունը**: Աշխատանքում առաջ քաշված

մոտեցումները, գաղափարներն ու առաջարկությունները հարստացնում են քաղաքական գիտության խնդրային ու առարկայական դաշտը, շրջանառության մեջ են դնում քաղաքական որոշումների կայացման ու լեգիտիմացման նոր մոտեցումներ՝ հիմք հանդիսանալով քաղաքագիտության նոր հարացույցի՝ քաղաքական որոշումների կայացման, ընթացքի փորձաքննության ու լեգիտիմացման ինտելեկտուալ սպասարկման մշակույթի ձևավորման համար: Արդի հասարակական, քաղաքական, սոցիալական, տնտեսական, մշակութային վերափոխումների, անկայունության, անորոշության, զուգահեռաբար ընթացող գլոբալացման և դեգլոբալացման, ինտեգրացման և ատոմիզացման գործընթացների պայմաններում նորովի է արժևորվում քաղաքական որոշումների մշակման, կայացման, ընթացիկ գնահատման, հանրայնացման ու լեգիտիմացման խնդիրը, որոշումների ինտելեկտուալ (վերլուծական-փորձագիտական) սպասարկման անհրաժեշտությունը՝ հանրային քաղաքականության բնագավառում ուրվագծելով ուղեղային կենտրոնների առանցքային դերակատարման ուղղությունները:

ՀՀ-ում իրականացված քաղաքագիտական հետազոտությունների շրջանակում այս ատենախոսությունն առաջինն է, որ հանրային քաղաքականության բնագավառում ուղեղային կենտրոնների ներգրավման հիմնախնդիրը դիտարկում է հանրային քաղաքականության սուբյեկտների կողմից կայացվող քաղաքական որոշումների փաստարկման, լավարկման ու հասարակական լեգիտիմության ապահովման համատեքստում՝ ՀՀ-ում հանրային քաղաքականության որոշումների ինտելեկտուալ սպասարկման միջավայրի ձևավորումը և ուղեղային կենտրոնների ինստիտուցիոնալ կայացումը նպաստող գործոնների շարքում առանձնացնելով քաղաքական վերնախավ-ուղեղային կենտրոններ-հասարակություն համագործակցության մշակույթի ձևավորման գործոնները,քաղաքական վերնախավի նախաձեռնողականությունը, արհեստավարժ կառավարման վրա հիմնվելու հակվածությունը և քաղաքական որոշումների կայացման բնագավառում օբյեկտիվ, վերլուծական ապարատով փաստարկված և

հնարավոր ելքերի կանխատեսումային սցենարներով գնահատված որոշումների կարևորման գիտակցումը: Ատենախոսության դրույթները տեսական առումով կարող են ծառայել բարձրագույն ուսումնական հաստատություններում հանրային քաղաքականության, հանրային կառավարման, հանրային դիվանագիտության, միջազգային հարաբերությունների նոր առարկաների ու դասընթացների մշակման և ուսումնական գործընթացում ներդրման համար:

Գործնական կիրառելիության տեսանկյունից ատենախոսության շրջանակներում կատարված վերլուծություններն ու առաջարկությունները կարող են օգտակար լինել հանրային քաղաքականության բնագավառում կայացվող որոշումների ինտելեկտուալ սպասարկման ու դրանց ընթացքի փորձագիտական գնահատման կառուցակարգերի ձևավորման, հանրային քաղաքականության սուբյեկտների կայացրած որոշումների արդյունավետ հանրայնացման, քաղաքական դիսկուրսում փափուկ ուժի կիրառման նոր ռազմավարությունների ներդրման աշխատանքներում: Կատարված վերլուծությունները կարող են օգտակար լինել նաև կայացվող քաղաքական որոշումների ժողովրդավարացման, բարդ, ոչ ժողովրդահաճո որոշումների հասարակական քննարկումների ժամանակ հասարակության հետ այլընտրանքային երկխոսության կապուղիների ձևավորման, ոչ կառավարական մարմինների օժանդակությամբ կայացվող որոշումների փաստարկման և դրանց հասարակական լեգիտիմության բարձրացման նոր արդյունավետ մեխանիզմների մշակման ու ներդրման համար:

**Հետազոտության փորձաքննությունը:** Ատենախոսությունը քննարկվել է ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի քաղաքական ինստիտուտների և գործընթացների ամբիոնում: Հետազոտության առանձին դրույթներ ներկայացվել են տարբեր միջազգային գիտաժողովների, համաժողովների և աշխատաժողովների շրջանակներում, այդ թվում՝ ՌԴ նախագահին առընթեր Ռազմավարական հետազոտությունների ռուսաստանյան ինստիտուտի կողմից կազմակերպված՝ «Ինտեգրացիոն գործընթացները հետխորհրդային

տարածությունում. հիմնախնդիրներ և հեռանկարներ» միջազգային գիտակրթական ծրագիր (ՌԴ, ք.Մոսկվա, ապրիլի 3-7, 2017թ.), Չինաստանի Շենսիի Նորմալ համալսարանի կողմից կազմակերպված՝ «Մեկ գոտի-մեկ ճանապարհ. խաղաղություն և զարգացում Եվրասիայում» միջազգային գիտաժողով (ՉԺՀ, ք.Սիան, դեկտեմբերի 17-22, 2016 թ.), Ռուսաստանի քաղաքական հետազոտությունների կենտրոնի (ՊԻՌ-կենտրոն) և ՌԴ արտաքին գործերի նախարարության դիվանագիտական ակադեմիայի գլոբալ անվտանգության հիմնախնդիրների կենտրոնի կողմից համատեղ կազմակերպված՝ «Գլոբալ անվտանգության հիմնախնդիրներ» միջազգային գիտակրթական ծրագիր (ՌԴ, Աբրամցևո, սեպտեմբերի 22-ից հոկտեմբերի 2, 2016 թ.), Չինաստանի ժամանակակից միջազգային հարաբերությունների ակադեմիայի կողմից կազմակերպված՝ «Պետական կառավարումը տեղեկատվայնացման դարաշրջանում» (ՉԺՀ, ք.Ցինդաո, օգոստոսի 29-30, 2016 թ.), ԵՊՀ 95-ամյակին նվիրված՝ «Կրթությունը 21-րդ դարում. հիմնախնդիրներ և մարտահրավերներ» միջազգային գիտաժողով (ՀՀ, ք.Երևան, հունիսի 10-13, 2014 թ.), Տնտեսագիտության, հումանիտար և կառավարման գիտությունների միջազգային կենտրոնի կողմից կազմակերպված՝ «Հումանիտար գիտություններ, տնտեսագիտություն և կառավարում» միջազգային գիտաժողով (ԱՄԷ, ք. Դուբայ, մարտի 22-23, 2014 թ.), Գլոբալ գիտահետազոտական կենտրոնի կողմից կազմակերպված՝ «Հասարակական գիտություններ, կրթություն և շրջակա միջավայր» միջազգային գիտաժողով (Մալայզիա, ք.Կուալա Լումպուր, հունվարի 15-16, 2014 թ.): Ատենախոսության դրույթներն արտացոլված են հեղինակի 4 մենագրության, 1 ուսումնամեթոդական աշխատանքի և ավելի քան 25 գիտական հոդվածներում:

**ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆ ՈՒ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ**

Կառուցվածքային և բովանդակային առումով ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, չորս գլխից, եզրակացությունից, գրականության ցանկից ու հավելվածից: Ատենախոսության ընդհանուր ծավալը 314 էջ է:

Ներածության մեջ ներկայացվում են թեմայի արդիականությունը, հետազոտության օբյեկտն ու առարկան, նպատակն ու խնդիրները, գիտական մշակվածության աստիճանը, մեթոդաբանությունը, գիտական նորույթները, ատենախոսության

տեսական նշանակությունն ու գործնական կիրառելիության հնարավորությունները:

Ատենախոսության առաջին՝ ***«Ուղեղային կենտրոնների էությունը և բնորոշումները»*** գլուխը բաղկացած է երեք ենթագլուխներից, որոնցում քննարկվում են ուղեղային կենտրոնների բնորոշման հիմնական մոտեցումները, դասակարգման տեսական, մեթոդաբանական հիմքերը և իրականացրած գործառույթներն արդի հասարակական-քաղաքական գործընթացներում:

Առաջին՝ ***«Ուղեղային կենտրոն հասկացության սահմանումները»*** ենթագլխում ուսումնասիրության առարկա են դառնում ուղեղային կենտրոն եզրույթի ծագումնաբանության, ինչպես նաև ուղեղային կենտրոնների՝ իբրև հանրային քաղաքականության առանձին սուբյեկտների, բնորոշման հետ կապված հարցերը: Ուղեղային կենտրոնների բնորոշումների վերլուծության հիման վրա հիմնավորվում է, որ գիտական ու մասնագիտական շրջանակները հիմնական շեշտադրումը կատարում են ակադեմիական հետազոտական կենտրոններից, պետական մարմիններին կից ուղեղային կենտրոններից և շահապաշտպան խմբերից դրանց ունեցած տարբերությունների ընդգծման վրա, ինչի հիման վրա հեղինակը եզրահանգում է, որ նման մոտեցման դրդապատճառը «ուղեղային կենտրոն» հասկացության դիրքավորման փորձն է: Ամփոփելով դիտարկված մոտեցումները՝ ձևակերպվում է ուղեղային կենտրոնների համապարփակ սահմանման սեփական մոտեցումը, ըստ որի՝ ուղեղային կենտրոնը շահույթ չհետապնդող և ինքնավարության բավարար մակարդակ ունեցող հետազոտական, վերլուծական կառույց է, որն իրականացնում է առավելապես հասարակագիտական ոլորտին առնչվող միջգիտակարգային բնույթի ուսումնասիրություններ, ռազմավարական մշակումներ, գեներացնում է սեփական գաղափարները և տարածում ակադեմիական շրջանակներում ձևավորված գաղափարները, մատուցում է խորհրդատվական, կրթական ծառայություններ, միաժամանակ ծառայում է որպես ինտելեկտուալ հարթակ քաղաքականության տարբեր մակարդակների հարցերի քննարկման համար, ինչի միջոցով կամրջի դեր է կատարում ակադեմիական գիտության, հասարակության, գործարար հատվածի և իշխանության միջև՝ նպատակ ունենալով մեծացնել սեփական ազդեցությունը քաղաքական

գործընթացներում և նպաստել անհատի, հասարակության, պետության կամ գլոբալ խնդիրների լուծմանը:

Երկրորդ՝ ***«Ուղեղային կենտրոնների գործառույթները»*** ենթագլխում քննարկման առարկա են դառնում ուղեղային կենտրոնների իրականացրած գործառույթներին և հանրային քաղաքականության ու հասարակական-քաղաքական գործընթացներում դրանց դերակատարմանն առնչվող խնդիրները: Մասնավորապես ուղեղային կենտրոնների խնդիրներով զբաղվող մի շարք առաջատար հետազոտողների, ինչպես նաև ԱՄՆ-ի, Միացյալ Թագավորության, ԵՄ առաջատար երկրների, Չինաստանի ու Ռուսաստանի հասարակական-քաղաքական գործընթացներում նշանակալի դերակատարում ունեցող մի շարք ուղեղային կենտրոնների իրականացրած գործառույթների ուսումնասիրման հիման վրա հեղինակը ժամանակակից ուղեղային կենտրոնների համար առանձնացնում է հետազոտական-վերլուծական, գիտականորեն հիմնավորված կանխատեսումների իրականացման ու սցենարների առաջադրման, տեղեկատվական հոսքերի ձևավորման ու կառավարման, փորձագիտական, խորհրդատվական, միջնորդական, հաղորդակցական, գաղափարների գեներացման և տարածման, կրթական, պետական կառավարման ոլորտին կադրերի մատակարարման և պաշտոնաթող բարձրաստիճան պաշտոնյաներին աշխատատեղի ապահովման գործառույթները:

Միևնույն ժամանակ, համեմատելով ուղեղային կենտրոնների, ակադեմիական հաստատությունների, պետական մարմիններին կից գործող հաստատությունների և շահապաշտպան խմբերի գործունեության բնորոշիչները, հեղինակն առանձնացրել է այն հիմնական պատճառները, որոնց ազդեցությամբ հանրային քաղաքականության բնագավառում որոշումներ կայացնողներն առավել միտված են նշված գործառույթների իրականացումը պատվիրակել հենց ուղեղային կենտրոններին: Ուղեղային կենտրոններին տրվող նախապատվությունը մեկնաբանվել է նրանով, որ վերջինները կարողանում են խորհրդատվական ծառայություններ մատուցել ավելի ցածր գներով, քանի որ դրանք կրճատում են խորհրդատվության մատուցման նպատակով անհրաժեշտ հիմնարար հետազոտությունների ֆինանսավորման կամ վարչական ապարատների պահպանման ծախսերը: Դրանք ունեն բարձր

հեղինակություն, հիմնականում գաղափարայնացված չեն,փորձում են զերծ մնալ որոշակի նեղ շրջանակների շահերի սպասարկումից և չեն խուսափում պետության ոչ ժողովրդահաճո որոշումների լեգիտիմացման գործընթաց ներգրավվելուց:Դրանց հետազոտողներն առավել ստեղծագործական են և հաճախ ցուցաբերում են խնդիրների լուծման այլընտրանքային, ոչ ստանդարտ մոտեցումներ: Ուղեղային կենտրոնները կաշկանդված չեն քաղաքական փոխդասավորության փոփոխությունների առումով. նրանք առավել արդյունավետ են աջակցում հետազոտողների տարբեր խմբերի միջև համագործակցությանը, քանի որ որևէ ոլորտի նկատմամբ մշտական հետաքրքրություն չունեն:

Երրորդ՝ ***«Ուղեղային կենտրոնների տիպաբանությունը»*** ենթագլխում ոլորտի խնդիրներով զբաղվող առաջատար հետազոտողներ Է. Ռիչի, Ք. Ուիվերի, Ջ. Մաք-Գանի, Ռ. Ուլրիխի,Դ.Էյբելսոնի,Դ.Սթոունի,Ա.Սիտնիկովի Դ. Ձայցևի,Դ.Իվանովի,Մ.Գորնու,Ա.Սունգուրովի և Ն. Մեդուշևսկու՝ ուղեղային կենտրոնների տիպաբանությանն առնչվող մոտեցումների համադրմամբ հեղինակը եզրահանգում է, որ մասնագիտական ու գիտական շրջանակներում առկա չէ ուղեղային կենտրոնների տիպաբանության միասնական բնորոշում:Ավելին, առկա մոտեցումները երբեմն նույնիսկ հակասական են: Ուղեղային կենտրոնների տիպաբանության ներկայացման հիմքում դրվում են ինչպես դրանց ինստիտուցիոնալ բաղադրիչները (իրավական կարգավիճակ, ֆինանսավորման ձևաչափեր ու աղբյուրներ և այլն), այնպես էլ գործունեության ուղղությունները (առաքելությունը, ռազմավարական նպատակներն ու ոլորտային ուղղվածությունը) և անկախության աստիճանը: Տիպաբանության բնորոշումների տարբերություններն ու հակասականությունը, ըստ հեղինակի, պայմանավորված են ինչպես վերջին տասնամյակներում ամբողջ աշխարհում ուղեղային կենտրոնների թվի աննախադեպ աճով, այնպես էլ տարբեր երկրներում հանրային քաղաքականության մշակութային և քաղաքական համակարգի առանձնահատկություններով, ձևավորված ավանդույթներով, ոլորտի կայացածության մակարդակով: Այդ առնչությամբ կատարվում է հետևություն,որ նշված խնդիրները

ոչ միայն բարդացնում են համապարփակ տիպաբանության մշակման աշխատանքները, այլև ոլորտի ներկայիս դրվածքի պայմաններում կասկածի տակ են դնում միասնական տիպաբանության մշակման նպատակահարմարությունը, քանի որ այն կհանդիսանա արհեստական խմբավորման միջոց՝ որևէ նշանակություն չունենալով ուղեղային կենտրոնների ընտրության կամ դրանց որևէ գործառույթի պատվիրակման հարցերում: Սակայն ուղեղային կենտրոնների դասակարգման խնդիրն առանցքային նշանակություն ունի, քանի որ, կախված կազմակերպաիրավական կարգավիճակից, գաղափարայնացվածության և անկախության աստիճաններից, ֆինանսավորման աղբյուրներից և այլ բնութագրիչներից, դրանք տարբեր կերպեն իրականացնում իրենց գործառույթները, որոնք, իրենց հերթին, տարբեր կերպ են ընկալվում ու գնահատվում ինտելեկտուալ արտադրանքի գնորդների ու սպառողների կողմից:

Ինչ վերաբերում է Հայաստանի ուղեղային կենտրոնների ոլորտին, ապա հեղինակը դրանց դասակարգման առումով նախապատվությունը տալիս է ինստիտուցիոնալ բնորոշիչներին, ըստ որոնց՝ առանձնացնում է անկախ (ոչ պետական), պետական կամ քվազի-պետական (պետական կառավարման որևէ կառույցի առընթեր կամ պետության կողմից հիմնադրված և առավելապես պետական ֆինանսավորմամբ գործող), համալսարանական կամ համալսարանին կից գործող ուղեղային կենտրոնները և արտերկրի ուղեղային կենտրոնների մասնաճյուղերը (ներկայացուցչությունները, ասոցացված կամ միջազգային ցանցային ձևաչափի տեղական կազմակերպությունները):

Ատենախոսության երկրորդ՝ ***«Ուղեղային կենտրոնների գենեզիսը և զարգացման էվոլյուցիան»*** գլուխը բաղկացած է երեք ենթագլուխներից, որոնցում քննարկվում են ուղեղային կենտրոնների՝ իբրև հանրային քաղաքականության սուբյեկտների, զարգացման օրինաչափությունները դրանց ծագման, ինստիտուցիոնալ կայացման փուլերում և արդի ժամանակաշրջանում: Առաջին՝ ***«Ուղեղային կենտրոնների ծագումը և քաղաքական փորձագիտության ինստիտուցիոնալացման գործընթացը 20-րդ դարի առաջին կեսին»*** ենթագլխում վերլուծության են ենթարկվում ուղեղային կենտրոնների ծագման և ինստիտուցիոնալ կայացման գործընթացները, ինչպես նաև դրանց զարգացմանը նպաստած գործոնները եվրոպական երկրնե-

րում, ԱՄՆ-ում, Չինաստանում: Ուսումնասիրության արդյունքում հեղինակը եզրահանգում է, որ չնայած ժամանակակից ուղեղային կենտրոններին՝ նման կառույցները սկզբնավորվել են Արևմտյան Եվրոպայում, այնուամենայնիվ որպես ինտելեկտուալ յուրահատուկ համակարգ ձևավորվել ու կայացել են առավելապես ԱՄՆ-ում, որի քաղաքական միջավայրն ամենանպաստավորն էր նման հաստատությունների հիմնման և ինստիտուցիոնալ կայացման համար: Կատարված ուսումնասիրության արդյունքներով հեղինակը հիմնավորում է, որ պետական քաղաքականության իրականացման գործընթացում փորձագետների, արհեստավարժ վերլուծաբանների և ուղեղային կենտրոնների ինտելեկտուալ արտադրանքի կիրառման կրիտիկական նշանակության կարևորումը հատկապես ընդգծված է եղել ամերիկյան քաղաքական վերնախավում, ինչը մեծապես նպաստել է ոլորտի բուռն զարգացմանը:

Ուղեղային կենտրոնների ծագման, զարգացման և ինստիտուցիոնալացման նախնական ժամանակաշրջանի ուսումնասիրության արդյունքներով հեղինակը եզրահանգում է, որ դրանք առանց նպաստավոր միջավայրի առկայության չեն կարող նշանակալի ազդեցություն ունենալ հանրային քաղաքականության մեջ և հասարակության կյանքում ու բնականաբար չեն կարող նման պայմանների բացակայության պարագայում վերածվել կայացած համակարգի: Իսկ որպես դրանց ձևավորման առանցքային բաղադրիչներ հեղինակի կողմից առանձնացվում են ինտելեկտուալ արտադրանքի պահանջարկը, որակյալ առաջարկը, գաղափար գեներացնողների բավարար ֆինանսական կայունությունը և մի շարք այլ նախապայմանների առկայությունը: Նշվում է, որ պետական կառավարման որոշումների բնագավառում ուղեղային կենտրոնների մուտքն ապահովելու տեսանկյունից կարևոր է քաղաքական առաջնորդների շրջանում ինտելեկտուալ արտադրանքի նկատմամբ պահանջարկը, ինչը կարող է արագացուցչի դեր կատարել ուղեղային կենտրոնների ոլորտի ինստիտուցիոնալացման գործում:

Երկրորդ՝ ***«Ուղեղային կենտրոնների զարգացման շարժընթացը XX դարի երկրորդ կեսին»*** ենթագլխում

ուսումնասիրվել են տարբեր քաղաքական մշակույթ և կառավարման մոդելներ ունեցող երկրներում ուղեղային կենտրոնների ինստիտուցիոնալ կայացման առանձնահատկությունները և դրանց մասնագիտացումների վրա ազդեցություն ունեցած հիմնական իրողություններն ու գործընթացները: Թեև որոշ հեղինակներ XX դարի երկրորդ կեսին ուղեղային կենտրոնների զարգացումն ու կայացումը հակված են կապել ու կառավարման գիտության դիրքերի ամրապնդման, հումանիտար գիտությունների նկատմամբ ուշադրության մեծացման և հետպատերազմյան շրջանում արևմտյան երկրների տնտեսությունների հաջող զարգացման հետ, սակայն հեղինակն ուսումնասիրության արդյունքներով հիմնավորելով, որ ուղեղային կենտրոնների զարգացման ու մասնագիտացման վրա մեծ ազդեցություն են ունենում պատմական ժամանակահատվածները, եզրահանգում է, որ ինտելեկտուալ արտադրանքի նկատմամբ պահանջարկի կտրուկ բարձրացումը XX դարի երկրորդ կեսին և ոլորտի բուռն զարգացումը մեծապես պայմանավորվել են «բարդացող» աշխարհի կողմից առաջ քաշվող նորանոր մարտահրավերներով: Հեղինակն արձանագրում է, որ եթե դարասկզբին ուղեղային կենտրոններն առավելապես կենտրոնացած էին միջազգային հարաբերությունների, ավելի ուշ` ազգային անվտանգության ոլորտի ուսումնասիրության բնագավառներում, ապա XX դարի երկրորդ կեսին վերջիններիս միջգիտակարգային ուսումնասիրությունների շրջանակն էականորեն ընդլայնվել է` ընդգրկելով տնտեսագիտության, բնապահպանական, հասարակական, քաղաքական տարբեր շերտերի շահերի պաշտպանության և հանրային քաղաքականության առնչվող բազմաթիվ այլ ոլորտների ուսումնասիրություններ: XX դարի երկրորդ կեսին ուղեղային կենտրոնների ոլորտի բնորոշ առանձնահատկություններ են մատնանշվել գլոբալ կանխատեսումներում մասնագիտացված հաստատությունների ձևավորումը, ուղեղային կենտրոնների ոլորտի գաղափարայնացումը և իբրև հետևանք քարոզչական, լոբբիստական ուղղվածությամբ և շահապաշտպան հաստատությունների (Advocacy tanks) և քաղաքական ժառանգության վրա (Legacy-based Think Tanks) հիմնված ուղեղային կենտրոնների ձևավորումը,

գլոբալացման ու տեղեկատվական հեղափոխության ազդեցությամբ անդրազգային և ցանցային ուղեղային կենտրոնների ձևավորումը:

Կատարված ուսումնասիրության արդյունքում հեղինակը նշում է, որ թեև ուղեղային կենտրոնների ոլորտի զարգացումը յուրաքանչյուր որոշակի երկրում կախված է եղել հանրային քաղաքականության բնագավառում ձևավորված ավանդույթներից, քաղաքական փորձագիտության նկատմամբ պետության որդեգրած քաղաքականությունից, ինչպես նաև քաղաքական վերնախավի կողմից սահմանված ռազմավարական առաջնահերթություններից, սակայն անկախ քաղաքական մշակույթից և պետություն-ուղեղային կենտրոն հարաբերությունների ձևաչափերից դրանց ձևավորման հիմնական նպատակը որակյալ ու փաստարկված այլընտրանքային փորձագիտական տեղեկատվությամբ պետության ապահովվածության մակարդակի բարձրացումը և հանրային քաղաքականության բնագավառում կայացվող որոշումների լեգիտիմացումն է:

Երրորդ՝ ***«Ուղեղային կենտրոնների ոլորտի զարգացման հիմնական միտումները XXI դարում»*** ենթագլխում իրականացվել են ուղեղային կենտրոնների քանակական և որակական ցուցանիշների ուսումնասիրություն և ուղեղային կենտրոնների թվով առաջատար և ոչ առաջատար երկրների համեմատական վերլուծություն, ինչը հնարավորություն է ընձեռել հիմնավոր ներկայացնելու ուղեղային կենտրոնների ոլորտի ձևավորմանն ու զարգացմանը նպաստող ինստիտուցիոնալ միջավայրին ներկայացվող պահանջները: Մասնավորապես տարբեր երկրներում ուղեղային կենտրոնների գործունեության պայմանների համակողմանի վերլուծության, դրանց գործունեության միջավայրի նկարագրման, ուղեղային կենտրոնների արդյունավետության, զարգացման, կամ դրանց գործունեությանը նպաստող ու գործունեությանը խոչընդոտող գործոնների բացահայտման նպատակով իրականացվել է Համաշխարհային տնտեսական համաժողովի կողմից ամենամյա «Գլոբալ մրցունակության զեկույցի» մի շարք ինդեքսներում ներառված և այս ոլորտին ուղղակիորեն առնչվող ցուցանիշների կլաստերային ու գործոնային վերլուծություն՝ ուղեղային կենտրոնների

զարգացած և զարգացող միջավայրեր ունեցող և Փենսիլվանիայի համալսարանի Լաուդերի ինստիտուտի կողմից ուղեղային կենտրոնների թվով առաջատար դիտարկված 25 երկրների ցուցանիշների լայն հավաքածուի հիման վրա: Յամեմատական վերլուծությունը հնարավորություն է ընձեռել առավել հստակ գնահատելու ուղեղային կենտրոնների զարգացածությունը տարբեր երկրներում և առավել հիմնավոր ներկայացնելու ուղեղային կենտրոնների գործունեության բարենպաստ և անբարենպաստ միջավայրերի բնորոշ գծերը,ինչի արդյունքում հեղինակը հիմնավորել է, որ յուրաքանչյուր երկրում ուղեղային կենտրոնների զարգացման համար անհրաժեշտ է հետևյալ առանցքային նախապայմանների առկայությունը. հանրային ֆոնդերի բազմազանություն (տնտեսության տարբեր հատվածներում տարաբնույթ նախաձեռնությունների նպատակով ձևավորվող հիմնադրամները,որոնց միջոցները գոյանում են տարբեր խմբերի նվիրատվություններից, հիմնադրամի թողարկած պարտատոմսերի ձեռքբերումից, և որոնց միջոցների տեղաբաշխման նկատմամբ առկա է քաղաքացիական հասարակության անմիջական վերահսկողություն), կառավարության բաց քաղաքականություն, որակյալ կառավարման դպրոցների առկայություն, բարձրագույն կրթության և վերապատրաստման բարձր որակ, ար-հեստավարժ կառավարման վրա հենվելու պրակտիկա,տաղանդներին գրավելու,պահպանելու և նրանց ներուժն օգտագործելու արդյունավետ կառուցակարգեր, որակյալ գիտահետազոտական հաստատությունների առկայություն, հետազո-տությունների և մշակումների վրա ընկերությունների կողմից կատարվող ծախսեր:

Այս ենթագլխում առանձին երկրների ուղեղային կենտրոնների գործունեության ուղղությունների, ինչպես նաև դրանց քանակական ու որակական վերլուծության հիման վրա հեղինակն արձանագրում է,որ արդի ժամանա-կաշրջանում ուղեղային կենտրոնների ոլորտին առավելապես բնորոշ են դրանց հանրային հեղինա-կության որոշակի անկումն ու քննադատության մեծացումը (հատկապես գաղափարայնացված կենտրոններինը), ուղեղային կենտրոնների շուկայի կայացումը ոլորտում ճանաչման,

հանրային ազդեցության և ֆինանսական դոնորների ու հովանավորների համար մրցակցային պայքարի սրացումն ու իբրև հետևանք՝ ինտելեկտուալ արտադրանքի տարածումն ու հանրայնացման բնագավառում հաղորդակցական ու տեղեկատվական տեխնոլոգիաների ակտիվ կիրառումը,զարգացած երկրներում ուղեղային կենտրոնների քանակական աճի դանդաղումը և դրա տեղափոխումը դեպի զարգացող երկրներ, նեղ, ոլորտային և առավելապես տեղային խնդիրներով մասնագիտացված ուղեղային կենտրոնների տարածումը, տարբեր ձևաչափի ազգային և անդրազգային մակարդակում գործող ցանցային ուղեղային կենտրոնների գործունեության տարածումը, ուղեղային կենտրոնների միավորումների և ընկերակցությունների ձևավորումը:

Ուղեղային կենտրոնների հետագա զարգացումը կանխորոշող արդի հասարակական-քաղաքական միտումների շարքում հեղինակն առանձնացնում է վերջին տասնամյակներում քաղաքական,տնտեսական,սոցիալական,բնապահպանական, անվտանգության, միջազգային հարաբերությունների և այլ ոլորտներում ի հայտ եկող խնդիրների աճող բարդացումը, տեղեկատվական աննախադեպ մեծ հոսքերում անհրաժեշտ տեղեկատվության զտման անհրաժեշտության մեծացումը, միջազգային անվտանգության ճարտարապետության խորքային վերափոխումների, նոր բազմաբևեռ աշխարհակարգի ձևավորման,աշխարհաքաղաքական գործընթացներում անորոշության և անկանխատեսելիության մակարդակի բարձրացման համատեքստում ինտելեկտուալ հակամարտության ձևավորումը, ժողովուրդների «սրտերի և մտքերի» համար մղվող պայքարի թեժացման պայմաններում տարբեր երկրներում համակարգային մոտեցումների մշակման նպատակով կրիտիկական ենթակառուցվածքների բնականոն գործառնության և զարգացման ապահովման անհրաժեշտության գիտակցման խորացումը: Հեղինակը եզրահանգում է, որ նշված նախապայմանների պահպանման պարագայում բազմաթիվ երկրներում առաջատար ուղեղային կենտրոնների կողմից մշակվող ինտելեկտուալ արտադրանքը կշարունակի առանցքային դերակատարում ունենալ դրանց քաղաքական

վերնախավի կողմից ներքին և արտաքին քաղաքականության մշակման և իրականացման գործընթացում:

Ատենախոսության երրորդ՝ ***«Ուղեղային կենտրոնները արդի քաղաքական գործընթացներում»*** գլուխը բաղկացած է երեք ենթագլուխներից, որոնցում քննարկվում են պետություն-փորձագիտական հանրություն փոխգործակցության և ինտելեկտուալ ներուժի օգտագործման առանձնահատկությունններն ու զարգացման ընթացքը տարբեր երկրներում: Ուսումնասիրվում են հանրային կարծիքի և քաղաքականության որոշումների վրա ուղեղային կենտրոնների ազդեցության հիմնական գործիքներն ու մեթոդաբանական մոտեցումները, ինչպես նաև քննարկվում են ուղեղային կենտրոնների վարկանիշավորման հետ կապված խնդիրները:

Առաջին՝ ***«Պետություն-փորձագիտական հանրություն փոխգործակցությունը և ուղեղային կենտրոնների ներուժի օգտագործման հիմնական մեխանիզմները»*** ենթագլխում ուսումնասիրության առարկա են դառնում պետություն-փորձագիտական հանրություն համագործակցության ծագումնաբանության և տարբեր ժամանակաշրջաններում պետության կողմից երկրի ինտելեկտուալ ներուժի օգտագործման ձևաչափերի զարգացման հետ կապված հարցերը: Ուսումնասիրելով համապատասխան աղբյուրները՝ հեղինակը գալիս է այն եզրահանգման, որ քաղաքական վերնախավի (իշխանություն, պետություն) հետ ինտելեկտուալների (իմաստուններ, գիտնականներ, փորձագետներ) փոխհարաբերությունների խնդիրները բազմակողմանիորեն ուսումնասիրվել և կարևորվել են բոլոր ժամանակներում՝ Հին Հունաստանի մտածողների աշխատանքներից սկսած մինչև մեր օրերը: Վերլուծելով պետության հետ ինտելեկտուալ հանրույթի անհատական ու ինստիտուցիոնալացված համագործակցության ու ինտելեկտուալ հանրույթի ներուժի օգտագործման ձևաչափերը՝ հեղինակը եզրահանգում է, որ եթե անհատական մակարդակով գիտելիք կրողներին իշխանական համակարգ ներգրավելու մեթոդները համեմատաբար պարզ են և բավականաչափ ուսումնասիրված, ապա պետություն-փորձագիտական հանրություն ինստիտուցիոնալ մակարդակով փոխգործակցության ձևաչափերն առավել բարդ ու բազմազան են: Վերլուծելով հանրային քաղաքականության բնագավառում կայացվող որոշումների լավարկման և երկրի անվտանգության համակարգի կենսունակության

ապահովման խնդիրները՝ հեղինակը եզրահանգում է, որ արդյունավետ պետական կառավարումը և ազգային անվտանգության ապահովումը՝ որպես զարգացման առավել օպտիմալ միջոցների, ուղիների որոնման, հիմնավորման ու իրականացման, անվտանգության համակարգի կատարելագործման, իրական և հնարավոր սպառնալիքների ու վտանգների բացահայտման գործընթաց, կարող է իրականացվել միայն հասարակության կազմակերպական և մտավոր ներուժի համակարգված կիրառման պարագայում: Ավելին, փորձագիտական հանրույթի ինտելեկտուալ կարողությունների հետևողական անտեսումը կարող է երկրի անվտանգության ու սոցիալական բնագավառներին առաջադրել լրջագույն խնդիրներ, ինչպիսիք են ուղեղների արտահոսքը, տվյալ երկրի ինտելեկտուալ ներուժի օգտագործումն այլ երկրների ու ազդեցության կենտրոնների կողմից, որը երբեմն կարող է օգտագործվել վերջինիս դեմ:

Երկրորդ՝ ***«Ուղեղային կենտրոնների ազդեցության մեխանիզմները հանրային կարծիքի ձևավորման և քաղաքական որոշումների կայացման վրա»*** ենթագլխում քննարկվում են հանրային քաղաքականության որոշումների և հանրային կարծիքի վրա ազդելու նպատակով ուղեղային կենտրոնների կիրառած գործիքակազմին առնչվող հարցերը: Առկա մեթոդաբանական գործիքների ուսումնասիրության ու ընդհանրացման արդյունքների հիման վրա հեղինակը նշում է, որ տարբեր հարթակներում իրենց ակտիվության մեծացման, սոցիալական, տնտեսական, քաղաքական խնդիրների լուծման իրենց տեսակետն ու տեսլականը որոշում կայացնողներին տեղ հասցնելու հնարավորություն ստեղծելու, ինչպես նաև հանրային քաղաքականության բնագավառում ու հանրային կարծիքի վրա իրենց ազդեցությունը մեծացնելու նպատակով ուղեղային կենտրոններն օգտվում են լայն զինանոցից: Մասնավորապես դրանք ակտիվորեն մասնակցում են խորհրդարանական լսումներին, գերատեսչություններին կից հասարակական խորհուրդների աշխատանքներին, նախաձեռնում են համաժողովներ, հանդես են գալիս օրենսդրության կատարելագործմանն ուղղված նախաձեռնություններով, քաղաքական որոշում կայացնող անձանց շրջանում տարածում են արագ ընթերցման համար հարմարավետ համառոտ վերլուծականներ, մատուցում են անհատական

խորհրդատվական ծառայություններ, ակտիվ աշխատանքներ են տանում ՉԼՄ-ների հետ և այլն:

Երրորդ՝ ***«Ուղեղային կենտրոնների վարկանիշավորման խնդիրները գործունեության արդյունավետության գնահատման համատեքստում»*** ենթագլխում ուսումնասիրվել են ուղեղային կենտրոնների գնահատման և հանրային քաղաքականության բնագավառում դրանց ներգրավման որոշումների կայացման նպատակով կիրառվող գործիքների ու մեթոդների հետ կապված խնդիրները: Հեղինակը նշում է, որ ուղեղային կենտրոնները հանրային քաղաքականության հաստատուն միավորներ չեն և, ինչպես ցանկացած այլ քաղաքական ինստիտուտ, անընդմեջ զարգացում են ապրում: Ուսումնասիրելով այդ ոլորտի զարգացման շարժընթացին համակարգված հետևելու, գործունեությունը և արդյունավետությունը գնահատելու նպատակով կիրառվող մոտեցումները հեղինակն արձանագրում է, որ մասնավորապես ուղեղային կենտրոնների ոլորտում առավելապես կիրառվում են վարկանիշավորման համակարգերը: Վերլուծելով ուղեղային կենտրոնների վարկանիշավորման բնագավառում եզակի հաստատության՝ Փենսիլվանիայի համալսարանի Լաուդերի ինստիտուտի «Ուղեղային կենտրոններ և քաղաքացիական հասարակության» ծրագրի կողմից հրապարակվող վարկանիշն ու դրա ձևավորման մեթոդաբանությունը՝ հեղինակը նշում է, որ վերջինը զերծ չէ որոշակի առանցքային թերություններից: Մասնավորապես վարկանիշավորման զեկույցի առանցքային խնդիրներից է յուրաքանչյուր երկրում ուղեղային կենտրոնների ճշգրիտ թվաքանակի բացահայտման, ուղեղային կենտրոնների գործունեության և թվաքանակի աճի կամ նվազման շարժընթացի ամենամյա հաշվառումը: Համադրելով զեկույց ներառված հաստատությունները, դրանց վարկանիշային դիրքերը և այդ դիրքի ընկալման պատկերները՝ մասնավորապես Հայաստանի, Չինաստանի և Ռուսաստանի ուղեղային կենտրոնների օրինակներով հեղինակը հիմնավոր մատնանշում է այն, որ բազմաթիվ առաջատար կենտրոններ ներառված չեն վարկանիշ, կամ դրանց համար սահմանված նշանակալիության և ազդեցիկության դիրքերն էականորեն շեղված են իրականությունից: Իբրև այլ հիմնարար խնդիրներ՝ ներկայացվում են ուղեղային կենտրոն կատեգորիայի լայն

ընդգրկումը, ինչի արդյունքում իբրև նման հաստատություն վարկանիշավորում են միանգամայն ոչ ուղեղային կենտրոնի գործառույթներ իրականացնող հաստատություններ, գնահատող փորձագետների ներգրավման խնդիրները և սուբյեկտիվ գնահատման բացառման կառուցակարգերի բացակայությունը, ուղեղային կենտրոնների գնահատման քանակական չափորոշիչների բացակայությունը և այլն:Հեղինակը,ուսումնասիրելով վարկանիշի ձևավորման առանձին գործոնների կազմը, կառուցվածքն ու գնահատման մոտեցումները,արձանագրում է,որ հաճախ հենց սահմանված գործոններն են սուբյեկտիվ գնահատումների պատճառ դառնում, քանի որ դրանցից շատերը, պայմանավորված երկրների առանձնահատկություններով, միասնական գնահատման հնարավորություններ չեն ընձեռում: Հեղինակն առաջարկում է ուղեղային կենտրոնների գործունեության արդյունքների և ազդեցիկության գնահատման իր սեփական մոտեցումը, որը հիմնված է ուղեղային կենտրոնների մեդիաակտիվության դիտարկման, հրապարակումներին հղումների հաշվառման և փորձագիտական հարցման մեթոդի համադրման վրա: Այս մեթոդաբանությամբ հեղինակը գնահատել է ուղեղային կենտրոնների թվով երկրորդ երկրի՝ Չինաստանի համապատասխան ոլորտը և մատնանշել առավել ազդեցիկ ուղեղային կենտրոնները:

Ատենախոսության չորրորդ՝ ***«Ուղեղային կենտրոնների գործունեությունը Հայաստանի Հանրապետությունում»*** գլուխը բաղկացած է երկու ենթագլուխներից, որոնցում ուսումնասիրվում են ուղեղային կենտրոնների ձևավորման և զարգացման էվոլյուցիան, ոլորտի առանձնահատկությունները, խնդիրները, ինչպես նաև ուղեղային կենտրոնների գործունեության հիմնական ցուցանիշները Հայաստանի Հանրապետությունում:

Առաջին՝ ***«Ուղեղային կենտրոնների ոլորտի ձևավորման գործընթացը Հայաստանի Հանրապետությունում»*** ենթագլխում ուսումնասիրության առարկա են դարձել ՀՀ ուղեղային կենտրոնների ձևավորման ու էվոլյուցիայի գործընթացը, ինչպես նաև ոլորտի զարգացմանը նպաստած ու զարգացմանը խոչընդոտած գործոններն ու գործընթացները: Հեղինակը ոլորտի ուսումնասիրության արդյունքներով արձանագրում է, որ չնայած խորհրդային տարիներին ԽՍՀՄ-ում և մասնավորապես նաև ՀԽՍՀ-ում գործել են

վերլուծական կառույցներ, սակայն հաշվի առնելով դրանց ազատության խիստ սահմանափակումը, հանրային քաղաքականության ինքնուրույն սուբյեկտ չհանդիսանալու հանգամանքը և հանրային քաղաքականության վրա ունեցած սահմանափակ ազդեցությունը՝ վերջիններս ժամանակակից ընկալմամբ հնարավոր չէ դասել ուղեղային կենտրոնների շարքում: Իսկ մեր իրականության մեջ առաջին փորձագիտական-վերլուծական կառույցների ձևավորումը հեղինակն արձանագրում է 1991 թ. անկախության վերականգնման և Հայաստանի Հանրապետության հռչակման ժամանակաշրջանին զուգահեռ: Անկախության սկզբնական ժամանակահատվածի խնդիրների ու մարտահրավերների և ուղեղային ոլորտի վրա դրանց ազդեցության գնահատմամբ հեղինակն արձանագրում է, որ մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոններ էականորեն զսպել են ոլորտի կայացման ընթացքը: Օբյեկտիվ գործոնների շարքում հեղինակը մատնանշում է Արցախյան գոյամարտը, տնտեսության խոր անկումը, սոցիալ-տնտեսական ճգնաժամը, ավանդական գիտական կապերի կորուստը, ժողովրդավարական ինստիտուտների զարգացման թույլ մակարդակը և այլն: Մասնավորապես XX դարի վերջին տասնամյակի ընթացքում գիտական ոլորտում զբաղվածների թիվը նվազել է գրեթե 4 անգամ, գիտական հետազոտություններով ու մշակումներով զբաղվող հաստատություններինը՝ շուրջ 2.5 անգամ: Սուբյեկտիվ գործոնների շարքում հեղինակն առանձնացնում է անկախ պետականության նախնական շրջանում ՀՀ-ում ժողովրդավարական և պետական ինստիտուտների զարգացման թույլ մակարդակի ազդեցությամբ ձևավորված որոշումների կայացման մոդելն ու քաղաքական մշակույթը, որոնցում հանրային քաղաքականության այլ սուբյեկտներ ներգրավված չեն կամ շատ թույլ են ներգրավված և առանցքում չունեն քաղաքական երկխոսությունն ու թիմային որոշումների կայացման սկզբունքը: Այս իրավիճակը նոր ձևավորվող ուղեղային կենտրոնների առջև «փակել է» հանրային քաղաքականության որոշումների բնագավառ մուտքի հնարավորությունները՝ իր հետքը թողնելով պետական կառավարման համակարգ-վերլուծական փորձագիտական

հաստատություններ հարաբերությունների հետագա ողջ ընթացքի վրա:

Հեղինակը նշում է,որ թերևս հենց քաղաքական գործընթացներից կտրված լինելու և ֆինանսավորման բացակայության հանգամանքն է հայկական նորաստեղծ ուղեղային կենտրոններն ուղղորդել դեպի արևմտյան հայտնի դրամաշնորհային հիմնադրամներից ֆինանսավորման հայցումը:Հեղինակն արձանագրում է,որ չնայած կատարվող հետազոտությունների համար բազմակի ավելի քիչ գնահատվող ֆինանսավորումը թույլ է տվել մեր գիտաշխատողներին շարունակել աշխատել ըստ մասնագիտության, ունենալ կայուն եկամուտ և որոշակիորեն, թեկուզ սահմանափակ թվով մասնագետների համար, մեղմել ծանր սոցիալ-տնտեսական իրավիճակը,որով հնարավորություն էր ընձեռում ամբողջովին չփոշիացնելու երկրի ամբողջ գիտական ներուժը,սակայն այն ունեցել է նաև զգալի բացասական դրսևորումներ:

ՀՀ ուղեղային կենտրոնների ոլորտի ուսումնասիրության արդյունքներով հեղինակն արձանագրում է, որ անկախացումից ի վեր ՀՀ-ում ֆորմալ առումով ստեղծվել է ավելի քան 100 ուղեղային կենտրոն կամ վերջինիս ձևաչափին որոշակիորեն համապատասխանող հաստատություն,որոնց մեծ մասը ստեղծվել է 2005 թ. հետո: Սակայն այդ կազմակերպությունների գործունեության ուսումնասիրության արդյունքներով հեղինակը փաստում է, որ դրանցից շատերը գոյություն են ունեցել կամ բացառապես ձևական, ֆորմալ առումով կամ ունեցել են ակտիվ գործունեության չափազանց կարճ ժամանակահատված,որից հետո պասիվացրել կամ ընդհանրապես դադարեցրել են հանրային գործունեությունը և փակվել: Կատարված ուսումնասիրությունների արդյունքներով անկախացման ժամանակաշրջանից մինչև մեր օրերը ձևավորված ուղեղային կենտրոնները հեղինակը տիպաբանորեն դասակարգում է չորս խմբում՝ անկախ կամ ոչ պետական, պետական կամ քվազի պետական, համալսարանական ուղեղային կենտրոններ և արտերկրի ուղեղային կենտրոնների մասնաճյուղեր՝ մանրամասն ներկայացնելով դրանցից յուրաքանչյուրում դասված ուղեղային կենտրոններին բնորոշ առանձնահատկությունները: Խոսելով ՀՀ

ուղեղային կենտրոնների տիպաբանության մասին՝ հեղինակը մատնանշում է, որ, չնայած քաղաքական կազմակերպությունների կողմից կատարված մի շարք փորձերին և բազմաթիվ հայտարարություններին, մեզանում դեռևս չկայացած բաղադրիչներ են մնում կուսակցություններին կից գործող ուղեղային կենտրոնները՝ արձանագրելով, որ նման կենտրոնների ստեղծման փորձեր եղել են,սակայն դրանց գործունեությունը չի առանձնացել երկարակեցությամբ:

Պետական համակարգի և ուղեղային կենտրոնների փոխգործակցության մշակույթի ձևավորման տեսանկյունից հեղինակը դրական քայլ է համարել 2017 թ. հունիսին ՀՀ ԱԺ արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովին կից ստեղծված «Անալիտիկ խորհուրդ» աշխատանքային խմբի հիմնումը, որի նպատակն է ԱԺ-ին աջակցել տարբեր թեմատիկ քննարկումներով և առաջարկություններով, ինչպես նաև 2017 թ. հուլիսին ՀՀ ԱԺ տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի և ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի միջև ստորագրված համագործակցության հուշագիրը,որով վերջինս դարձել է վերոնշյալ հանձնաժողովի պաշտոնական գիտական խորհրդատու-գործընկերը:

ՀՀ-ում ուղեղային կենտրոնների ոլորտի ձևավորման գործընթացի և գործող ուղեղային կենտրոնների տիպաբանության ուսումնասիրության արդյունքների ընդհանրացմամբ հեղինակը փաստում է, որ թեև վաղ է ներկայումս խոսել ՀՀ-ում ուղեղային կենտրոնների ոլորտի ձևավորված և կայացած լինելու մասին, սակայն մեզանում առկա են ուղեղային կենտրոններ, որոնք արդեն իսկ ճանաչված և կայացած հաստատություններ են և պետական կառավարման համակարգ-ուղեղային կենտրոններ փոխգործակցության համար արդեն իսկ ձևավորված են բավական ինստիտուցիոնալ կարողություններ:

Երկրորդ՝ ***«Հայաստանի ուղեղային կենտրոնների ոլորտի արդի վիճակը, խնդիրներն ու զարգացման հեռանկարները»*** ենթագլխում ուսումնասիրվել են արդի ժամանակահատվածում Հայաստանում գործող ուղեղային կենտրոնների բնորոշիչ առանձնահատկությունները, և քննարկվել են ՀՀ-ում ոլորտի զարգացման հեռանկարների ու խոչընդոտների հետ կապված հարցերը: Իրականացված դիտարկումների

արդյունքներով հեղինակն արձանագրում է, որ ներկայումս ՀՀ-ում գործում է շուրջ հինգ տասնյակ ուղեղային կենտրոն կամ վերջինիս ձևաչափին որոշակիորեն համապատասխանող կազմակերպություն, որոնց հիմնական մասն անկախ ուղեղային կենտրոններն են:Հայրենական ուղեղային կենտրոնների համացանցային կայքերի և ոչ պետական ուղեղային կենտրոնների գործունեության մշտադիտարկման հիման վրա հեղինակն արձանագրում է, որ ներկայումս հայրենական ուղեղային կենտրոնների հետազոտական նախապատվություններն են հիմնականում ժողովրդավարացման, քաղաքացիական հասարակության և մարդու իրավունքների հիմնահարցերը, հակամարտությունները և տարածաշրջանային անվտանգության հարցերը, տնտեսություն, քաղաքական, տնտեսական ինտեգրացման գործընթացներ և հիմնահարցեր (ԵՄ, ԵԱՏՄ), հայկական Սփյուռքին նվիրված և հայագիտական ուսումնասիրությունները, սոցիոլոգիական հետազոտությունները, ինչպես նաև կրթության և երիտասարդության հարցերը: Իբրև ՀՀ ուղեղային կենտրոնների ոլորտի առաջին բնորոշ առանձնահատկություն՝ մատնանշվում է դրանց գերկենտրոնացումը մայրաքաղաքում: Իբրև հաջորդ առանձնահատկություն՝ ներկայացվում են ուղեղային կենտրոնների ինստիտուցիոնալ բաղադրիչների և մասնավորապես կազմակերպաիրավական կարգավիճակի խիստ բազմազանությունը և երբեմն ուղեղային կենտրոնի կազմակերպաիրավական կարգավիճակին հակասող կարգավիճակով դրանց գրանցումը: Իբրև կարևոր խնդիր՝ հեղինակի կողմից առանձնացվել է նաև լայն հանրության և հասարակական, պետական, քաղաքական տարբեր շրջանակներում հայկական ուղեղային կենտրոնների ճանաչվածության խնդիրը: Նման իրավիճակը հեղինակը բացատրում է այնպիսի խնդիրներով, ինչպիսիք են կայուն գործունեության ապահովման և մարքեթինգային գործիքակազմի կիրառման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների սղությունը, ուղեղային կենտրոնների կառավարման ոչ բավարար արդյունավետությունը, արհեստավարժ գիտնական-վերլուծաբանների պակասը, տեղեկատվական տիրույթում և հանրային հարթակներում տվյալ կազմակերպությունների ոչ բավարար

ակտիվությունը և այլն: Անկախ գործող ուղեղային կենտրոնների առանձնահատկությունների ուսումնասիրության արդյունքներով հեղինակը փաստում է, որ հիմնականում արտերկրի կազմակերպություններից ստացվող դրամաշնորհների միջոցով ֆինանսավորվող կենտրոնները ֆինանսավորման ծրագրի ավարտից հետո սովորաբար պասիվացնում են իրենց գործունեությունը մինչև հաջորդ դրամաշնորհի ստացումը կամ ընդհանրապես փակվում են: Այդ պատճառով դրանցից շատերը վերածվել են մարդ-կենտրոնների, վերջիններիս հետազոտական և ընդհանրապես գործունեության օրակարգը շարունակվում է ձևավորվել արտերկրում, ինչը հեղինակը հակված է դիտարկել իբրև մտահոգիչ երևույթ: Արտերկրի ֆինանսավորման գերակայությունը հեղինակը պայմանավորել է ոլորտի՝ պետական ու մասնավոր հատվածի թերֆինանսավորմամբ, ինչպես նաև երկրի ներսում միջոցների հայթայթման հնարավորությունների սահմանափակությամբ:

Տեղեկատվական տիրույթում հայկական ուղեղային կենտրոնների ակտիվության դիտարկման արդյունքների ամփոփմամբ հեղինակն արձանագրում է, որ թեև հայկական ուղեղային կենտրոնների մեծ մասը համացանցում ունի պաշտոնական կայք, սակայն վերջիններիս զգալի մասը բավականին ուշ են թարմացնում տեղեկատվությունն իրենց էջերում: Հեղինակը նշում է, որ ուղեղային կենտրոնների գործունեության անբավարար տեղեկատվական ուղեկցումը բացասաբար է ազդում դրանց կողմից քաղաքական վերնախավի որոշումների ընդունման գործընթացի և հասարակության վրա ունեցած ազդեցության մակարդակի վրա, ինչին նպաստում է նաև արտերկրի ֆինանսավորմամբ գործող կենտրոնների լեզվական «անգլերենակենտրոնությունը»: Վերլուծելով հանրային քաղաքականության ու հասարակական կարծիքի վրա հայկական ուղեղային կենտրոնների ազդեցության աստիճանը՝ հեղինակը նշում է, որ ընդհանուր առմամբ, բացի պետական ուղեղային կենտրոններից, որոնք, թեկուզ երբեմն սահմանափակ, սակայն, ունեն քաղաքական վերնախավի վրա ազդեցության սեփական միջոցները, ՀՀ ուղեղային կենտրոնների ճնշող

մեծամասնությունն ազդեցությամբ նշանակալիորեն աչքի չի ընկնում, և հայկական ակադեմիական, փորձագիտական հանրության ազդեցությունը քաղաքական իրականության ձևավորման և քաղաքական գործընթացի վրա այդքան էլ ակնհայտ չէ: Միևնույն ժամանակ հեղինակը ցույց է տալիս, որ որոշ անկախ/ոչ պետական ուղեղային կենտրոններ իրենց հանրային ակտիվությամբ, հետազոտական և հրատարակչական գործունեությամբ որոշակիորեն ավելի մեծ ազդեցություն ունեն հանրության և մասնավորապես երկրում հանրային կարծիքի ձևավորման վրա,քան պետական ֆինանսավորմամբ գործողները: Դրանում հեղինակը նկատել է երկրում հանրային կարծիքի ձևավորման և կայացվող որոշումների լեգիտիմացման լրջագույն խնդիրներ: Այնուամենայնիվ հեղինակն արձանագրում է, որ գոյություն ունեն պետություն-ինտելեկտուալ հանրույթ ինստիտուցիոնալ փոխգործակցության զարգացման լավ հեռանկարներ, քանի որ հաշվի առնելով առկա ակադեմիական և համալսարանական հաստատությունների կադրային ներուժը՝ կարելի է պնդել, որ ՀՀ-ում դեռևս կա չօգտագործված ներուժ՝ ինչը կայուն ֆինանսավորման առկայության պարագայում կարող է նպաստել ոլորտի արագ զարգացմանը: Հեղինակը նշում է, որ ուղեղային կենտրոնների ոլորտի պետական ֆինանսավորման ավելացումը, պետություն-փորձագիտական հանրություն առավել սերտ համագործակցությունը,ինչպես նաև ուղեղային կենտրոնների ներգրավումը որոշումների կայացման գործընթացի ինտելեկտուալ ապահովման գործում, կարող են էականորեն ավելացնել պետական համակարգի հնարավորությունները՝ փափուկ մեխանիզմներով ուղղորդելու ուղեղային կենտրոնների գործունեությունը և ինտելեկտուալ ներուժը երկրի և հասարակության առջև ծառացած բազմաթիվ մարտահրավերների լուծմանը: Նշվածի կապակցությամբ հեղինակը կարևորում է ուղեղային կենտրոնների գործառնության առաջավոր միջազգային փորձի ուսումնասիրությանն ու տեղայնացմանն ուղղված աշխատանքների իրականացումը, հայկական

քաղաքական, սոցիալ-տնտեսական իրականությանը համապատասխան՝ ուղեղային կենտրոնների ստեղծման և զարգացման համար առավել կիրառական գործիքների և մեխանիզմների բացահայտումը, ինչպես նաև Հայաստանի քաղաքական մշակույթի առանձնահատկությունները հաշվի առնող ուղեղային կենտրոնների գործառնության մոդելի մշակումը: Իբրև ուղեղային կենտրոնների ներուժի օգտագործման ու դրանց հետ փոխգործակցության ձևավորման և զարգացման արդյունավետ ուղի՝ հեղինակը մատնանշում է Ազգային անվտանգության խորհրդի քարտուղարությանը կից փորձագիտական խորհրդի ստեղծումը, որտեղ կհրավիրվեն ինչպես ուղեղային կենտրոնների, այնպես էլ ակադեմիական շրջանակների ճանաչված մասնագետներ: Որպես համագործակցության այլ, ավելի խորը ձևաչափ է թիրախավորվում ԱԱԽ որոշումներին նպաստելու նպատակով վերլուծությունների ու երաշխավորությունների պատվիրակումն ուղեղային կենտրոններին, ինչը, սակայն, պահանջում է տեղեկատվական անվտանգության ապահովման հավելյալ կառուցակարգերի մշակում և ներդրում:

Ըստ ատենախոսության գլուխների՝ ***եզրակացությունում*** ներկայացվում են հետազոտության հիմնական արդյունքները, առանձնացվում են տեսագործնական նշանակություն ունեցող հետևյալ եզրահանգումներն ու առաջարկությունները.

- ✓ Թեև քաղաքական վերնախավի որոշումների ինտելեկտուալ սպասարկման պրակտիկան կիրառվել է անտիկ ժամանակաշրջանից սկսած, սակայն այն չի կրել ինստիտուցիոնալ բնույթ: Ներկայումս հասարակական-քաղաքական կյանքում ու գլոբալ միջավայրում ընթացող վերափոխումները, որոնք բնութագրվում են պերմանենտ անկայունությամբ, անորոշությամբ, բարդությամբ և ոչ միանշանակությամբ, էապես փոփոխում են նաև հանրային քաղաքականության բնագավառում որոշումների կայացման, քաղաքականության իրականացման ու որոշումների լեգիտիմացման ընթացակարգերն ու մեթոդաբանությունը:

✓ Ներկայումս կայացվող որոշումների արդյունավետության բարձրացման, որոշման պատասխանատվությունը կիսելու և չեզոք կողմի ջանքերով որոշման նկատմամբ հանրային դրական վերաբերմունք ձևավորելու նպատակով հանրային քաղաքականության որոշումների բնագավառում մեծ թափ է հավաքում արտաքին արհեստավարժ, վերլուծական կարողություններով օժտված ու հաղորդակցության կապուղիների տիրապետող կազմակերպությունների ներգրավումը:

✓ XXI դարում պետական կառավարման մարմինների և փորձագիտական հանրության փոխգործակցությունն իրականացվում է ինչպես անհատական, այնպես էլ ինստիտուցիոնալ ձևաչափով և ունի բազմաթիվ դրսևորումներ: Սա կապված է նրա հետ, որ հանրային քաղաքականության բնագավառում մշտապես մեծանում է փափուկ ուժի կիրառության անհրաժեշտությունը: Այս համատեքստում հարկ է արձանագրել, որ մեր օրերում ուղեղային կենտրոնները դարձել են ոչ միայն ինքնատիպ ինտելեկտուալ հարթակներ, այլ նաև շատ դեպքերում վեր են ածվել ներքին ու արտաքին քաղաքականության ակտիվ դերակատարների:

✓ Հանրային քաղաքականության որոշումների կայացման բնագավառում ակադեմիական հետազոտական ու շահապաշտպան կազմակերպությունների և պետական մարմիններին կից ստեղծվող ոչ անկախ վերլուծական կառույցների համեմատ ուղեղային կենտրոններին տրվող նախապատվությունը պայմանավորված է նրանով, որ վերջինները կարողանում են խորհրդատվական ծառայություններ մատուցել ավելի ցածր գներով,քանի որ դրանք կրճատում են խորհրդատվության մատուցման նպատակով անհրաժեշտ հիմնարար հետազոտությունների ֆինանսավորման կամ վարչական ապարատների պահպանման ծախսերը, փորձում են զերծ մնալ որոշակի նեղ շրջանակների շահերի սպասարկումից և չեն խուսափում պետության ոչ ժողովրդահաճո որոշումների լեգիտիմացման գործընթաց ներգրավվելուց: Դրանց հետազոտողներն առավել ստեղծագործական են, և հաճախ ցուցաբերում են խնդիրների լուծման ոչ ստանդարտ մոտեցումներ:

✓ Պետական կառավարման համակարգում, քաղաքական կուսակցություններում, այլ հասարակական-քաղաքական միավորումներում որոշումների ընդունման ինտելեկտուալ աջակցության ինստիտուտի ձևավորումը սերտորեն կապված է կայացվող որոշումների բարդության և պետության առաջադրվող խնդիրների դաշտի բազմազանության հետ:

✓ Ուղեղային կենտրոնների ծագումն ու զարգացումը ենթադրում են չորս հիմնական նախապայմանների առկայություն՝ ուղեղային կենտրոնների «արտադրանքի» նկատմամբ պահանջարկ («քաղաքական շուկայի» առկայությունը), մասնագետների (փորձագիտական-վերլուծաբանական հանրության) առկայություն, նման ինտելեկտուալ կենտրոնների ստեղծման և գործունեության համար անհրաժեշտ ֆինանսավորման աղբյուրների առկայություն և քաղաքական առաջնորդների կողմից նման հաստատությունների կարևորում ու դրանց ձևավորման ուղղությամբ անձնական նախաձեռնողականություն:

✓ Քաղաքական փորձագիտության ինստիտուտի ձևավորումն ու կայացումն որոշ երկներում պայմանավորված է նաև քաղաքական համակարգի, քաղաքական որոշումների ընդունման գործընթացի առանձնահատկություններով, քաղաքական մշակույթով, ժողովրդավարական ինստիտուտների հասունության աստիճանով, ինչպես նաև սեփական կարողությունները զարգացնելու,պետության ինտելեկտուալ ներուժն առկա սոցիալ-քաղաքական հիմնախնդիրների լուծմանը ծառայեցնելու առումով պետական կառույցների հետաքրքրվածության աստիճանով:

✓ Ժամանակակից ուղեղային կենտրոնները հանրային քաղաքականության և հասարակական կարծիքի ձևավորման վրա ազդելու նպատակով զբաղվում են քաղաքական խնդիրների վերլուծությամբ, քաղաքական երաշխավորությունների մշակմամբ և հետազոտությունների հրապարակմամբ, ընթացիկ քաղաքականության հարցերի վերաբերյալ փորձագիտական խորհրդատվության տրամադրմամբ, կառավարության տարաբնույթ ծրագրերի փորձաքննությամբ և գնահատմամբ, ռազմավարական պլանավորմամբ, վարկանիշավորմամբ, հասարակության և իշխանության մարմինների

հետկապերով, փորձագիտական հանրույթ-զանգվածային լրատվության միջոցներ կայուն կապերով և վերջիններիս համար քաղաքական գործընթացների մեկնաբանմամբ, «պտտվող դռների» սկզբունքով իշխանության մարմիններին կադրերի մատակարարմամբ և իշխանության տարբեր օղակների փորձառու պաշտոնյաներին փորձագիտական աշխատատեղի ապահովմամբ: Դրանք դրսևորում են օրենսդրական փոփոխությունների նախաձեռնություններ, մասնակցություն են ունենում կազմակերպվող հասարակական լսումներին, ներգրավվում են պետական հաստատություններին կից խորհուրդներում, կազմակերպում են վերապատրաստումներ, աշխատաժողովներ, մամուլի ասուլիսներ, հրապարակում են վերլուծական նյութեր և այլն:

✓ Չնայած ընձեռած այլընտրանքային հնարավորություններին՝ քաղաքական որոշումների բնագավառում ուղեղային կենտրոնների դերակատարման ու հանրային կարծիքի վրա ազդեցության մեծացումը պարունակում է նաև որոշակի ռիսկեր: Մասնավորապես ուղեղային կենտրոնների և քաղաքական փորձագիտության գաղափարայնացումը տանում է նրան, որ ներկայումս ուղեղային կենտրոնների ոլորտում զգալի կշիռ ունեն քարոզչական, լոբբիստական, շահապաշտպան հաստատությունները (advocacy think tanks):

✓ Ուղեղային կենտրոնների ազդեցության մեծացումը, շահապաշտպան ուղեղային կենտրոնների մեծ քանակությունը և դրանց գործունեության ֆինանսավորման բազմազանեցվածության ցածր մակարդակը մեծացնում են հավանականությունը, որ վերջինները կարող են սպասարկել ոչ թե ազգային, այլ նեղ խմբերի շահեր և հանրային քաղաքականության բնագավառում ակտիվացնել որոշակի կենտրոններից ուղղորդվող որոշումների առաջադրումը՝ դրանք փաստարկելով վերլուծությունների արդյունքներով, որոնք այնքան էլ օբյեկտիվորեն չեն արտացոլում առկա իրողությունները:

✓ Հանրային քաղաքականության բնագավառում ուղեղային կենտրոնների ներգրավումը պայմանավորված է դրանց

մասնագիտացումներով և հիմնախնդրին առնչվող փորձառությամբ: Այդ համատեքստում կարևոր խնդրի է վերածվում ուղեղային կենտրոնների ներգրավման չափորոշիչների ու ցուցիչների մշակումը, ինչի համար սովորաբար կիրառվում են վարկանիշավորման համակարգերը: Սակայն ոլորտի արդի միտումները ցույց են տալիս, որ միջազգային կազմակերպությունների կողմից հրապարակվող վարկանիշային զեկույցներն առավելապես ազդեցության գործիքներ են և հաճախ միտված են ոչ այնքան առկա օբյեկտիվ պատկերը ներկայացնելուն, որքան գործունեության որոշակի ձևաչափեր, վարքաձև, գործելաոճ սահմանելուն կամ ձևավորելուն, որոշ դեպքերում էլ կարող են ունենալ քողարկված գաղափարախոսական կամ քաղաքական ուղղորդումներ:

- ✓ Անկախ պետականության նախնական շրջանում ՀՀ-ում ժողովրդավարական և պետական ինստիտուտների զարգացման թույլ մակարդակը ձևավորել է որոշումների կայացման այնպիսի մոդել, որտեղ հանրային քաղաքականության այլ սուբյեկտներ ներգրավված չեն: Անկախացման առաջին տարիներին ձևավորված քաղաքական մշակույթը, որն առանցքում չի ունեցել քաղաքական երկխոսության ու թիմային որոշումների կայացման սկզբունքը, նոր ձևավորվող ուղեղային կենտրոնների առջև «փակել է» դեպի հանրային քաղաքականության որոշումների բնագավառ մուտքի հնարավորությունները՝ ազդելով պետական ապարատ-վերլուծական հաստատություններ հարաբերությունների հետագա ընթացքի վրա:
- ✓ Պետականության վերականգնումից ի վեր ՀՀ-ում ֆորմալ առումով ստեղծվել է 100-ից ավելի ուղեղային կենտրոն կամ վերջինիս ձևաչափին որոշակիորեն համապատասխանող հաստատություն, որոնց մեծամասնությունը ստեղծվել է 2005 թ. հետո: Սակայն դրանցից շատերը գոյություն են ունեցել կամ բացառապես ֆորմալ առումով կամ ունեցել են ակտիվ գործունեության կարճ ժամանակահատված: Ներկայումս ՀՀ-ում գործում է շուրջ հինգ տասնյակ ուղեղային կենտրոն կամ վերջինիս ձևաչափին որոշակիորեն համապատասխանող կազմակերպություն, որոնց հիմնական մաս անկախ ուղեղային կենտրոններն են:

✓ Ըստ ինստիտուցիոնալ բնորոշիչների՝ հայկական ուղեղային կենտրոնները տիպաբանորեն հնարավոր է բաժանել չորս պայմանական տեսակի՝ անկախ (կամ ոչ պետական), պետական (կամ քվազի պետական), համալսարանական ուղեղային կենտրոններ և արտերկրի ուղեղային կենտրոնների մասնաճյուղեր:

✓ Ներկայումս հայկական ուղեղային կենտրոնների հիմնական մասնագիտացումներն են ժողովրդավարացման, քաղաքացիական հասարակության և մարդու իրավունքների, հակամարտությունների և տարածաշրջանային անվտանգության հարցերի ուսումնասիրությունը, տնտեսության, քաղաքական, տնտեսական ինտեգրացման գործընթացների, կրթության և երիտասարդության հիմնահարցերի վերլուծությունը, հայկական Սփյուռքին և հայագիտությանն առնչվող հետազոտությունները, ինչպես նաև տարաբնույթ սոցիոլոգիական հետազոտությունները:

✓ Պետական կամ այլ աղբյուրից կայուն ֆինանսավորման բացակայությունը և քաղաքականության վրա ազդեցության աննշան հնարավորությունները ՀՀ-ում ազդեցություն են ունեցել ուղեղային կենտրոնների գաղափարական կենտրոնացման և հետազոտական մասնագիտացումների վրա: Ձևավորման նախնական փուլից սկսած՝ ուղեղային կենտրոններն իբրև գործընկեր հիմնականում համագործակցել և ֆինանսավորվել են արևմտյան տարբեր հայտնի հիմնադրամների և դեսպանությունների կողմից, որոնք ներկայումս էլ անկախ, ոչ պետական ուղեղային կենտրոնների ֆինանսավորման հիմնական աղբյուրներն են:

✓ Արտերկրի հիմնադրամներից ստացված դրամաշնորհները թեև նպաստել են, որ նմանատիպ կենտրոնները կարողանան իրականացնել գիտական հետազոտություններ՝ բավարարելով սեփական մասնագիտական աճի կարիքները, և հնարավորություն են ընձեռել ամբողջովին չփոշիացնել ու երկրի գիտական ներուժը, սակայն ֆինանսավորման այլ աղբյուրների բացակայությունը նմանատիպ համագործակցությունը երկարաժամկետում վերածել է ուղեղային կենտրոնների որոշակի կախվածության:

✓ Դրամաշնորհների շրջանակներում իրականացվող հետազոտություններից շատերը նպաստել են, որ հայկական ուղեղային կենտրոնները հաճախ իրենց ինտելեկտուալ ներուժն ուղղեն այնպիսի խնդիրների իրականացմանը, որոնք առաջնահերթ են եղել ոչ այնքան հայկական հանրության՝ ՀՀ սոցիալական, տնտեսական, գիտական, ռազմական և քաղաքական առաջնահերթությունների առումով, որքան բխել են տվյալ հիմնադրամի կամ վերջինիս ծագման երկրի հետաքրքրություններից: Մյուս կողմից, արտերկրի ֆինանսավորումն ու հատկապես դրա շրջանակներում իրականացված հետազոտողների փոխանակման ծրագրերը նպաստել են նաև ՀՀ-ից ուղեղների աննախադեպ արտահոսքին:

✓ Արտերկրի ֆինանսավորմամբ գործող ուղեղային կենտրոնները, ունենալով համեմատաբար մեծ ֆինանսավորում, իսկ դրանց ղեկավարները, անհատական մակարդակում ունենալով ավելի բարձր մեդիաակտիվություն և ճանաչվածություն, կարողանում են ներքին ֆինանսավորմամբ աշխատող կենտրոնների համեմատ ավելի շոշափելի ազդեցություն ունենալ հանրային կարծիքի վրա՝ երբեմն ձևավորելով ոչ հավասարակշռված, բևեռացված կարծրատիպային ընկալումներ:

✓ Արտաքին ֆինանսավորմանը համարժեք ներքին ֆինանսավորման բացակայությունը ձևավորում է ուղեղային կենտրոնների օրակարգային ուղղվածության (ազգային շահ-պատվիրատուի հետաքրքրություններ) անհավասարակշռություն, որի պայմաններում քաղաքականության բնագավառում կայացվող որոշումների հանրային լեգիտիմացման գործընթացում պետությունը զրկվում է որոշումների հավասարակշռված մեկնաբանության օժանդակությունից, հատկապես, երբ այդ որոշումները լինում են ոչ ժողովրդահաճո, ոչ միարժեք ընդունվող, վիճելի կամ ունենում են բախտորոշ նշանակություն հետագա ժամանակահատվածներում քաղաքական կամ տնտեսական կուրսի փոփոխության առումով:

✓ Չնայած քաղաքական կազմակերպությունների կողմից կատարված մի շարք փորձերին՝ ՀՀ-ում դեռևս կայացած չեն կուսակցություններին կից գործող ուղեղային կենտրոնները, որոնք թեև բազմաթիվ անգամներ

ստեղծվել են տարբեր կուսակցություններում, սակայն ներկուսակցական բազմակարծության և քաղաքական կուսակցություններ-ուղեղային կենտրոններ փոխգործակցության մշակույթի բացակայության պատճառով չեն ունեցել բավարար ակտիվություն և ձևավորումից կարճ ժամանակ անց դադարեցրել են իրենց գործունեությունը:

✓ Միևնույն ժամանակ փորձագիտական հետազոտական հմտություններով օժտված ու բավարար մեդիա և հասարակական ակտիվություն ունեցող բազմաթիվ անհատներ անձնական խորհրդատվության մակարդակով մշտապես շփում են ունեցել քաղաքական կուսակցությունների առաջնորդների հետ՝ երբեմն համալրելով այդ կուսակցությունների շարքերը կամ կուսակցական նախընտրական ցուցակները և պատասխանատվություն ստանձնելով դրանց քաղաքական ծրագրերի որոշ դրույթների ձևակերպման համար, իսկ Ազգային ժողովում մանդատ ստանալուց հետո՝ նաև համապատասխան ոլորտային հանձնաժողովներում կուսակցության դիրքորոշումների ներկայացման համար:

✓ ՀՀ-ում ուղեղային կենտրոնների և փորձագիտական հանրության ազդեցությունը քաղաքական իրականության, օրակարգի ձևավորման և գործընթացի վրա այնքան էլ նշանակալի չէ: Հայկական ուղեղային կենտրոնները լայն հանրության և հասարակական, պետական, քաղաքական տարբեր շրջանակներում ունեն ճանաչվածության խնդիր: Ուղեղային կենտրոնների մեծամասնությունը հայտնի չեն ոչ միայն հասարակության լայն շերտերին ու քաղաքական շրջանակներին, այլև ակադեմիական, փորձագիտական ոլորտի ներկայացուցիչներին:

✓ Սահմանափակ ազդեցության հիմնական պատճառներն են. ուղեղային կենտրոնները չունեն կայուն գործունեության ապահովման և մարքեթինգային գործիքակազմի կիրառման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցներ, դրանց տեղեկատվական ուղեկցումն անբավարար մակարդակի է, արհեստավարժ վերլուծաբանների պակասը, տեղեկատվական տիրույթում և հանրային հարթակներում դրանց սահմանափակ ակտիվությունը, ուղեղային կենտրոնների կարևորության ոչ բավարար ընկալումը

քաղաքական վերնախավի կողմից, ինչպես նաև ինստիտուցիոնալ մակարդակով դրանց միջև համագործակցության ցածր աստիճանն ու նվիրատվության ավանդույթի բացակայությունը:

✓ Ուղեղային կենտրոնների ոլորտի պետական ֆինանսավորման ավելացումը, պետություն-փորձագիտական հանրություն առավել սերտ համագործակցությունը, ինչպես նաև ուղեղային կենտրոնների ներգրավումը որոշումների կայացման գործընթացի ինտելեկտուալ ապահովման գործում, կարող է էականորեն ավելացնել պետական համակարգի հնարավորությունները՝ փափուկ մեխանիզմներով ուղղորդելու ուղեղային կենտրոնների գործունեությունը և ինտելեկտուալ ներուժը երկրի և հասարակության առջև ծառացած մարտահրավերների լուծմանը:

✓ ՀՀ պետական կառավարման համակարգում հայրենական ուղեղային կենտրոնների ներուժի օգտագործման արդյունավետ մեխանիզմ է Ազգային անվտանգության խորհրդի քարտուղարությանը կից փորձագիտական խորհրդի ստեղծումը, որտեղ կհրավիրվեն ինչպես ուղեղային կենտրոնների, այնպես էլ ակադեմիական շրջանակների ճանաչված մասնագետներ: Պակաս կարևոր չէ նաև ԱԱԽ կազմում հայկական ուղեղային կենտրոնների գործունեության մշտադիտարկման և նրանց հետ հարաբերությունների ապահովման ստորաբաժանման հիմնումը, որի գործառույթները կլինեն ոլորտի վերաբերյալ տվյալների բանկի ձևավորումը, ուղեղային կենտրոնների գործունեության, կազմակերպվող միջոցառումների, հրապարակումների մշտադիտարկումը և կայացվող որոշումների տեղեկատվական ապահովման նպատակով ուղեղային կենտրոնների հետ հանդիպումների ու մասնագիտական քննարկումների նախաձեռնումը:

✓ Համագործակցության ավելի խորը ձևաչափ է ԱԱԽ որոշումների նախապատրաստման նպատակով վերլուծությունների ու երաշխավորությունների պատվիրակումն ուղեղային կենտրոններին, ինչը, սակայն, պահանջում է տեղեկատվական անվտանգության ապահովման հավելյալ կառուցակարգերի մշակում և ներդրում,

ուղեղային կենտրոնների վարկանիշավորման գործուն ներքին համակարգի առկայություն:

**Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի հետևյալ գիտական աշխատություններում.**


1. ***Աթոյան Վ.***, Ուղեղային կենտրոնների ոլորտի զարգացման հիմնական միտում-ները XXI դարում // Եր., «Բանբեր ՀՊՏՀ», N 3 (47), 2017, էջ 103-126:
2. ***Աթոյան Վ.***, Ուղեղային կենտրոնների ոլորտի զարգացման շարժընթացը XX դարի երկրորդ կեսին // Եր., «Բանբեր ՀՊՏՀ», N 2 (46), 2017, էջ 172-186:
3. ***Атоян В.***, Вопросы взаимодействия мозговых центров стран ЕАЭС в контексте интег-рационных процессов: вызовы и возможности // Евразийская интеграция: проблемы и перспективы. Сб. матер. круглого стола «Интеграционные процессы на постсоветском пространстве: проблемы и перспективы» (Москва, 2–8 апреля 2017 г.) / Под ред. д.и.н. О. В. Петровской, к.и.н. С. В. Тихоновой. Рос. ин-т стратег. исслед.; Межгосударств. фонд гуманитарного сотрудничества государств - участников СНГ. М.: РИСИ, 2017, с. 23-33.
4. ***Atoyan V.***, Armenian Think Tanks influence aspects on Public Policy // “European Journal of Law and Political Sciences”, Vienna (Austria), N 2, 2017, pp. 59-62.
5. ***Atoyan V.***, Some features of Armenian think tank industry // “European Science Review”, Vienna (Austria), N 3-4, 2017, pp. 87-89.
6. ***Աթոյան Վ.***, Ուղեղային կենտրոնների ծագումը և քաղաքական փորձագիտության ինստիտուցիոնալացման գործընթացը XX դարի առաջին կեսին // Եր., «Բանբեր ՀՊՏՀ», N 1 (45), 2017, էջ 139-153:
7. ***Աթոյան Վ.***, Ուղեղային կենտրոնների տիպաբանության հարցերը քաղաքագիտական դիսկուրսում //Եր., «21-րդ ԴԱՐ», N 1 (71), 2017, էջ 85-102:
8. ***Атоян В.,*** О вопросах интеллектуального обеспечения государственной политики // Ереван, «21-й ВЕК», N 3 (40), 2016, с. 114-123.
9. ***Атоян В.***, Индустрия «мозговых центров» в Армении // «Проблемы национальной стратегии», Москва, N 4 (37), 2016, с. 158-176.
10. ***Աթոյան Վ.***, Ուղեղային կենտրոնների գլոբալ և ազգային վարկանիշավորման միջազգային փորձը //Եր., «21-րդ ԴԱՐ», N 3 (67), 2016, էջ 4-16:
11. ***Աթոյան Վ.***, Պետություն-փորձագիտական հանրության փոխգործակցությունը ազգային անվտանգության համատեքստում //Եր, «21-րդ ԴԱՐ», N 4(68), 2016, էջ 25-39:
12. ***Աթոյան Վ., Օհանյան Ս., Մալքջյան Ա.***, Ուղեղային կենտրոնները քաղաքական գործընթա-ցում.«Հինգերորդ իշխանություն»//Եր.,«Բանբեր ՀՊՏՀ»,N 1(41),2016,էջ 147-157:
13. ***Աթոյան Վ., Օհանյան Ս., Մալքջյան Ա.***, Ուղեղային կենտրոններն արդի քաղաքական

գործընթացներում // Եր., «Տնտեսագետ» հրատ. («Ամբերդ» մատենաշար N 33), 2016, 100 էջ:

14. ***Աթոյան Վ., Մովսիսյան Շ.***, Չինաստանի ուղեղային կենտրոնները // Եր., «Տնտեսագետ» հրատ. («Ամբերդ» մատենաշար N 29), 2016, 80 էջ:

15. ***Աթոյան Վ., Թադևոսյան Ռ.***, Իսրայելի ուղեղային կենտրոնները հանրային քաղաքականությունում // Եր., «21-րդ ԴԱՐ», N 6 (70), 2016, էջ 70-84:

16. *Atoyan V.*, University Affiliated Think Tanks in Armenia // “Austrian Journal of Humanities and Social Sciences”, Vienna (Austria), N 11-12, 2015, pp. 58-59.

17. *Atoyan V., Ohanyan S., Malkjyan A.*, Development prospects of Armenian university affiliated think tanks: AMBERD research center // Sofia (Bulgaria), “Almanach via Evrasia”, N 4, 2015.

18. ***Աթոյան Վ., Մովսիսյան Շ.***, Քաղաքական գործընթացների վրա ուղեղային կենտրոնների ազդեցության գնահատման խնդիրները // «Գիտելիք, նորաստեղծություն և զարգացում» ՀՊՏՀ 25-րդ գիտաժողովի նյութեր (նոյ. 11-13, 2015), Եր., 2015, էջ 35-39:

19. ***Աթոյան Վ., Օհանյան Ս., Մալքջյան Ա., Մովսիսյան Շ.***, Հայաստանի բուհական վերլուծական կենտրոնները // Եր., «Տնտեսագետ» հրատ. («Ամբերդ» մատենաշար N 27), Եր., 2015, 58 էջ:

20. ***Աթոյան Վ., Օհանյան Ս., Մալքջյան Ա., Մովսիսյան Շ.***, Հայաստանի բուհական հումանիտար վերլուծական կենտրոնները // Եր., «21-րդ ԴԱՐ», թիվ 4 (62), 2015թ., էջ 78-93:

21. *Атоян В.*, Мозговые центры в системе обеспечения национальной безопасности // Եր., «Բանբեր ՀՊՏՀ», N 4 (40), 2015, էջ 127-139:

22. *Atoyan V.*, Challenges of Information Security in the context of New World Order formation: view from Armenia // Sofia (Bulgaria), “Almanach via Evrasia”, N 3, 2014.

23. ***Աթոյան Վ., Դադայան Լ.***, Տեղեկատվական-հաղորդակցական անվտանգության ապահովման արդի խնդիրների շուրջ //Եր., «Բանբեր ՀՊՏՀ», N 3(39), 2015, էջ 136-150:

24. ***Աթոյան Վ., Հովսեփյան Ս., Մկրտչյան Ա., Մովսիսյան Շ., Բուդաղյան Ռ., Թադևոսյան Ռ., Մուրադյան Ա.***, Արտասահմանյան առաջատար համալսարանական ուղեղային կենտրոնների գործունեության ուսումնասիրությունն ու լավագույն փորձի ներդրման հնարավորությունները ՀՀ-ում // Եր., «Տնտեսագետ» հրատ. («Ամբերդ» մատենաշար N 14), 2014, 84 էջ:

25. *Atoyan V.*, Globalization and Transformation of the Nation State // “International Conference on Arts, Economics and Management”, March 22-23, 2014, Dubai (UAE), pp. 81-84.

26. ***Աթոյան Վ.***, Ազգային անվտանգության հիմնախնդիրներ. դասախոսություններ // Եր., «Տնտեսագետ» հրատ., 2014, 154 էջ:
27. ***Atoyan V.***, Main Issues of National Security Protection in the Age of Globalization, “International Conference on Education, Economics and Humanities”, Jan. 15-16, 2014, Kuala Lumpur (Malaysia), pp. 50-53.
28. ***Աթոյան Վ.***, Գլոբալ տեղեկատվական միջավայրի ձևավորման հարցերը և մարտահրավերները // Եր., «21-րդ ԴԱՐ», N 6 (52), 2013թ., էջ 78–95:
29. ***Աթոյան Վ.***, Ազգային անվտանգության տեսության հարցերի շուրջ // Եր., «21-րդ ԴԱՐ», N 2 (48), 2013, էջ 82–94:
30. ***Աթոյան Վ.***, Ուղեղային կենտրոններ. անցյալ, ներկա և ապագա // Եր., «Բանբեր ՀՊՏՀ», N 1 (29), 2013, էջ 104-117:

**НАЦИОНАЛЬНЫЙ ИССЛЕДОВАТЕЛЬСКИЙ УНИВЕРСИТЕТ ОБОРОНЫ МО РА**
**АТОЯН ВАРДАН КОРЮНОВИЧ**

## НОВЫЕ СУБЪЕКТЫ ПУБЛИЧНОЙ ПОЛИТИКИ: “ МОЗГОВЫЕ ЦЕНТРЫ ” В ПОЛИТИЧЕСКИХ ПРОЦЕССАХ

**Диссертация на соискание ученой степени доктора политических наук по специальности 23.00.02 - «Политические институты и процессы, международные отношения».**

**Защита состоится 16 февраля 2018 г., в 15:00, на заседании специализированного совета ВАК РА 056 «Политология» при Национальном исследовательском университете обороны МО РА (ул. К. Улнеци 56/6, 0037, г. Ереван, Республика Армения).**

РЕЗЮМЕ

Диссертация посвящена современным проблемам вовлечения мозговых центров в интеллектуальное обеспечение и в процессы легитимизации решений, принимаемых в сфере публичной политики и взаимодействия государства и экспертного сообщества. Актуальность исследования обусловлена реалиями, возникшими вследствие изменений в социальной, экономической, политической, культурной, технологической сферах общественной жизни. Под воздействием данных преобразований существенно расширяется круг факторов, влияющих на обеспечение жизнедеятельности, стабильное развитие и национальную безопасность государств, что, в свою очередь, увеличивает степень неопределенности. В результате существенно усложняется процесс принятия решений, способствуя росту «цены» политических решений и значительно подчеркивая необходимость недопущения ошибок. Естественно, что данные реалии приводят к изменениям процедуры и методологии принятия решений, имплементации политики и легитимизации решений. Подвергается изменениям субъектный состав, структура и степень вовлеченности лиц, готовящих политические решения, сопровождающих процесс их реализации и обеспечивающих их общественную легитимность. В настоящее время постепенно растет тенденция вовлечения мозговых центров в разработку, принятие, экспертное сопровождение, имплементацию и легитимизацию политических решений. Во многих странах мозговые центры задействованы не только в экспертном, информационном обеспечении государственных решений или в их объективной экспертной оценке, но и в обеспечении легитимности принятых решений или осуществляемой политики. Естественно, что изучение учреждений, играющих подобную активную и ключевую роль и имеющих определенное влияние на принимаемые решения, а также выявление

инструментария их воздействия на другие субъекты публичной политики имеют существенное значение в контексте улучшения публичной политики.

Структурно и содержательно диссертация состоит из введения, четырех глав, заключения, списка литературы и приложений. Диссертация изложена на 314 страницах.

***Во введении*** представлены актуальность темы, объект и предмет исследования, цель и задачи, степень научной разработанности, методология, научная новизна, теоретическое значение и возможности практического применения.

*В первой главе диссертации* ***«Сущность и дефиниции мозговых центров»*** представлены основные подходы определения мозговых центров, теоретические и методологические основы их классификации, а также их функции в современных общественных-политических процессах. Предметом исследования выступают вопросы возникновения термина «мозговой центр», а также проблемы дефиниции мозговых центров как отдельных субъектов публичной политики. В работе резюмируются существующие подходы, а также представлен собственный подход автора к определению мозговых центров, дано всеобъемлющее определение мозговых центров с выделением их основных функций.

*Во второй главе диссертации* ***«Генезис и эволюция мозговых центров»*** обсуждаются закономерности развития мозговых центров как субъектов публичной политики как на этапах их возникновения, институционального становления, так и на современном этапе. Исследуя процессы формирования и институционального становления мозговых центров, а также факторы, способствующие их развитию, автор приходит к заключению, что несмотря на то, что мозговые центры в современном формате зародились на Западе, а в настоящее время существуют почти во всех странах, очевидно, что без наличия благоприятной атмосферы они не могут играть существенную роль и оказывать влияние в публичной политике и в общественной жизни, и естественно, не могут стать состоявшейся системой. В качестве ключевых компонентов их формирования автор выделяет спрос на интеллектуальную продукцию со стороны органов государственного управления и частного сектора, а также качественное предложение и удовлетворительную финансовую стабильность генераторов идей.

*В третьей главе диссертации* ***«Мозговые центры в современных политических процессах»*** исследуются особенности и процесс развития взаимодействия государства с экспертным сообществом в разных странах, возможности использования интеллектуального потенциала экспертного сообщества, основные инструменты и методологические подходы воздействия мозговых центров на общественное мнение и политические решения, а также рассматриваются проблемы, связанные с рейтингованием мозговых центров. Автор в результате исследования соответствующих источников приходит к заключению, что несмотря на то, что вопросам взаимоотношений интеллектуалов с политической элитой придавалось значение во все времена, осознание необходимости формирования профессиональной команды, призванной обеспечивать интеллектуальное сопровождение, произошло только в новейшей истории, когда человечество вступило в эпоху промышленных и технологических революций. На основе исследования и обобщения результатов функционирования мозговых центров автор детально представляет основной инструментарий, технологии и стратегии мозговых центров с целью роста их влияния в современных политических процессах. В третьем подзаголовке «Проблемы рейтингования мозговых центров в контексте оценки эффективности их функционирования» исследованы проблемы оценки деятельности мозговых центров, инструменты и методы их вовлечения в процессы принятия решений в публичной политике. Обсуждая необходимость прослеживания развития функций и оценки эффективности данной сферы и применяемые с этой целью подходы, автор утверждает, что в международной практике в целях оценки деятельности мозговых центров в основном применяются системы рейтингования. Вместе с этим автор утверждает, что рейтинговые

отчеты, публикуемые зарубежом, в том числе различными международными организациями, одновременно выступают в качестве действенных институтов влияния, которые, иногда не лишены субъективных элементов и используются для определения или формирования конкретной организационной модели или формата функционирования. В контексте решения проблемы автор предлагает собственный подход оценки результатов деятельности и влияния мозговых центров, основанный на рассмотрении медиаактивности мозговых центров, учета цитирования их публикаций и сопоставления метода экспертного опроса.

*В четвертой главе **«Деятельность мозговых центров в Республике Армения»*** исследуются процесс формирования и эволюции мозговых центров в Армении, проблемы данной сферы, особенности и динамика их развития. На основе оценки проблем и вызовов первоначального периода независимости и их влияния на сферу мозговых центров, автор утверждает, что ряд объективных и субъективных факторов сдерживали процесс их становления. В качестве объективных факторов автор рассматривает потерю традиционных научных связей, существенное сокращение финансирования научной сферы и его неудовлетворительный уровень по сей день, а также низкий уровень развития демократических и государственных институтов в первые десятилетия независимости. В качестве субъективных факторов автор выделяет модель принятия решений и политическую культуру, в которой остальные субъекты публичной политики представлены очень слабо, не основаны на политическом диалоге и на принципе принятия командных решений. В качестве других факторов выделяются также недостаточное финансовое обеспечение мозговых центров, проблемы человеческого капитала, низкий уровень общественной активности и институционального взаимодействия. Исследуя последствия ограниченного вовлечения мозговых центров в публичной политике и финансирования в основном из-за рубежа, автор выделяет те риски, которые наличествуют при неудовлетворительной заботе государства.

На основе обобщения результатов исследования данной сферы, автор предлагает возможные пути развития, которые в частности основаны на внедрении механизма взаимодействия государства и экспертного сообщества под координацией секретариата Совета национальной безопасности. В заключительной части диссертации представлены основные результаты исследования, теоретические и практические выводы и рекомендации. Основные положения исследования представлены в 4 монографиях, 1 учебно-методической работе и в более 25 научных статьях.

**VARDAN ATOYAN**

**NEW SUBJECTS OF PUBLIC POLICY:**
**"THINK TANKS" IN POLITICAL PROCESSES**

**Dissertation under the specialization of 23.00.02 – "Political Institutions and Processes, International Relations" aspiring to earn a Doctoral Degree in Political Sciences.**

**The public defense of the dissertation will take place on 16 February, 2018, at 15:00 in the National Defense Research University MOD RA at HAC Specialization Chamber session. (Address: 56/6 K. Ulnetsi str., 0037, Yerevan, Republic of Armenia).**

ABSTRACT

The Dissertation is devoted to modern issues of interaction between state and expertise society and involvement of think tanks in activities of legitimization and intellectual service regarding implemented decisions which are made in the sphere of public policy. Modernity of the research is conditioned by ongoing urgent transformations in social, economic, political, cultural and public life of states. By the influence of those transformations framework of factors affecting vital activities, provision of sustainable development, and national security of states essentially expend which itself enhances the level of uncertainty. As a result decision making process is considerably complicated by increasing "cost" of made political decisions and vitally underlining necessity of making no mistakes. Of course this situation considerably changes procedures and methodology in decision making, policy implementation, and legitimization of decisions the sphere of public policy. Structure, level of involvement and construction of subjects providing public legitimization of decisions and tracking the execution process of is subject to change. Currently trend of active involvement of think tanks gradually increases in elaboration, adoption and experimental guidance on implementation also legitimizing processes in the sphere of public policy. The latter have not only turned into implementers of expertise of state decisions, information provision and solving issues or implementers of objective expertise of public policy processes in many countries but also as main decision makers and tools of applying state soft power and providing legitimacy of applied policies or made decisions in public perception. It is natural that research of institutions having such active and key role and also having impact on decision making and disclosure of influence tools on public policy and other subjects has an essential role in the context of improvement of public policy.

From the structural and content point of view the dissertation is composed of an Introduction, 4 chapters, conclusion, references and annexes. In total the dissertation is 314 pages.

**Introduction** presents modernity of the topic, main object and subject of the research, the goals and obstacles, level of scientific development, methodology, scientific novelties, and theoretical importance of the dissertation and opportunities of practical applicability.

In the First ***"The essence and characteristics of think tanks"*** Chapter of the Dissertation main approaches of think tank characterization, types of classification and methodological basis, also functions implemented by think tanks in modern social and political activities are discussed. Main subjects of the research here are origins of term "think tank", also issues referring characterization of think tanks as separate subjects of public policy. Summing up discussed approaches in this dissertation the author has formed his own approach of comprehensive definition of think tanks and has pointed out the main activities of think tanks.

The Second ***"Genesis and evolution of the think tanks"*** Chapter of the Dissertation touches upon development patterns during origin and institutional development and modern stages of think tanks as public policy subjects. Researching origin and institutional development of think tanks in different countries also factors promoting development the authors makes conclusion that think tanks of the modern format though being originated in the West currently exist in almost all countries but think tanks

will not be able to have significant role and influence in the frames of public policy without favourable environment and of course will not be able to turn into an established system among the society. And as key factors of their development the author emphasises demand of intellectual goods by the state governing system and private sector, also sufficient financial sustainability of those generating ideas and efficient supply.

The Third ***"Think tanks in modern political processes"*** Chapter of the Dissertation discusses development processes, characteristics of applying intellectual potential and collaboration between state and expertise society in different countries, main tools and methodological approaches impacting public opinion and political decisions are touched upon, also ranking issues of think tanks are discussed. As a result of researches of respective sources the author concludes: though relationship of intellectuals with the political elite has been emphasised in all times realizing necessity of establishing a professional team called to immediate intellectual service emerged only in the period of newest history when mankind has entered to the era of industrial and technological revolution. On the bases of research and generalization regarding think tank activities the author presents in detail the main toolkit, technologies and strategies applied by think tanks to enhance the influence in the modern political processes. In the third "Rating issues of think tanks in the context of estimating activity efficiency" sub-chapter of the third chapter discusses activity estimation of think tanks and issues regarding methods and involvement tools in decision making process in the sphere of public policy. Discussing necessity of systematically monitoring development mobility of the sphere, estimation of activities and efficiency, and also approaches applied for that reason the author states that for the purposes of evaluation of think tank activities in the international practice mostly rating systems are applied. At the same time the author states that rating reports published by foreign or different international organizations are effective tool of influence which sometimes are not free of subjective elements and serve as exact organizational model or defining and forming activity format. In the context of solving the issue the author offers his own method of results of activities of think tanks and impact assessment which is based on combination of observing media activites, references of publications and expert inquiry method of think tanks.

In the fourth "***Activities of think tanks in the Republic of Armenia"*** Chapter of the Dissertation development and evolution processes of think tanks in Armenia, also main issues of the sphere, specifications and development mainstream are discussed. The author, by evaluating rose in the first years of independence and challenges and the influence of those factors in the sphere of think tanks notes that several objective and subjective factors have significantly repressed development of the sphere. Among objective factors the author points out the loss of traditional scientific relations, tangible reduction of founds in the sphere of science and its insufficient level till now, as well low level of state institutes' development and democracy in the first years of independence. Among subjective factors the author emphasises already formed decision making model and political culture in which other subjects of public policy are extremely weakly involved and political dialogue and the principle of team decision-making is not of a major importance. Among other factors insufficient financial means, human resource, public activeness issues and inadequate institutional collaboration of think tanks are mentioned. Carrying research on limited involvement of the think tanks in the sphere of public policy and mainly consequences of foreign founding the author presents the main risks which exists due to the insufficient care of the State regarding this sphere. The author presents possible ways of the sphere development by generalization of research results of the sphere which are particularly based on the investment of state-expertise community collaboration mechanisms under the coordination of Secretariat of the National Security Council.

The summary of the Dissertation presents main results, theoretical and practical conclusions and recommendations. Main provisions of the Research are summed up in 4 monographs, 1 education-methodological work and more than 25 scientific articles of the author.

